10) իրականացնում է մանկավարժների, մարզիչների, խմբակների ղեկավարների և այլ մասնագետների ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

11) հաստատում է հաստատության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

12) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

37. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

38. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

39. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

40. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի կարգադրության համաձայն, տնօրենի լիազորությունները իրականացնում է փոխտնօրեններից մեկը, կամ այլ անձ:

41.Հաստատության փոխտնօրենը, հրահանգիչը և մեթոդիստը՝

1) պատասխանատու են հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար.

2) վերահսկողություն են իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) կազմակերպում են մեթոդական աշխատանքներ, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

4) ընդհանրացնում և տարածում են լավագույն խմբերի աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից դարձնում մարզամշակութային աշխարհի նորագույն նվաճումներին:

42.Տնտեսվարը՝

1) պատասխանատու է շենքի գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ և բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ մարզադահլիճների, դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

2) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

43.Մարզիչ-մանկավարժները, խմբակների ղեկավարները՝

1) դաստիարակչական աշխատանք են կատարում իրենց խմբերի սաների շրջանում, սերտորեն համագործակցում մյուս խմբերի հետ.

2) ապահովում սաների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.

3) իրականացնում են խմբերի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սաների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

4) կազմակերպում սաների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական, մտավոր, հոգեկան զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.

5) արգելում են բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու,տնօրինելու և իր օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

46.Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

47.Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

48.Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

50. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

52. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

53.Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության՝ լրացուցիչ մարզամշակութային կրթադաստիարակչական ծառայությունների իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

54. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը

կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

55. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

56. Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

57. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 201-Ա

ԿԱՄԱՐԻՍԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կամարիսի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 201-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան 2022 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային գործունեություն և կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հաստատությունը հանդիսանում է Կամարիսի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 42.215.1053088, վկայականի համար 03548957, գրանցված է 14.01.2019թ.):

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Կամարիս գյուղ, 3-րդ փողոց՝ 41:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Камариский дом культуры" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Камариский дом культуры" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Palace of culture in Kamaris village" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ " Palace of culture in Kamaris village " of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

8. Հաստատությունն կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

9.Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային, կրթական

հաստատությունների և կազմակերպությունների հետ:

10.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան է՝

1) բնակչության մշակութային պահանջմունքների բավարարումը.

2) հաստատության գործունեությունը հիմնվում է անձի համակողմանի մշակութային զարգացման, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման վրա.

3) ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդույթների պահպանումը, զարգացումը և տարածումը.

4) հաստատության կրթադաստիարակչական գործունեությունը իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության.

5) հաստատությունը պատասխանատու է երեխաների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար.

12. Հաստատությունում գործունեության նպատակն է՝

1) տարբեր բնույթի մշակութային միջոցառումների՝ ցուցահանդեսների, մրցույթ-փառատոնների, կինոցուցադրումների կազմակերպումը.

2) ազգային մշակութային արժեքների քարոզումը.

3) երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, դաստիարակության ապահովումը.

4) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը.

5) խմբակների միջոցով պատանիների և երիտասարդների՝ պարի, երաժշտության, արհեստների, թատերական, նկարչական և այլ ուղղվածության ուսուցման իրականացումը.

6) խմբակների միջոցով մարզական պարապմունքների իրականացումը.

13. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) ճամբարների կազմակերպում.

2) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական և մշակութային ծառայություններ՝ հիմնադրի սահմանած կարգով.

3) մշակութային և մարզական այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14.Հաստատության կառուցվածքում ներառվում են՝

1) ժողստեղծագործության խմբակները.

2) երաժշտական բաժինը.

3) գեղարվեստի բաժինը.

15. Խմբակներում ու բաժիններում երեխաների քանակակազմը որոշում է հիմնադիրը:

16. Հաստատությունում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, որի տևողությունը չպետք է պակաս լինի 34 շաբաթից:

17.Հաստատության աշակերտների արձակուրդները հատկացվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցով:

18. Ուսումնառությունն ավարտած և համապատասխան գիտելիքներ ստացած

սաներին կարող է հանձնվել վկայական՝ հաստատության կողմից սահմանված կարգին համապատասխան:

4.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19.Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

20. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

21. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

22. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

23. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում

պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24.Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) կատարում է աշխատանքի բաշխում աշխատակիցների միջև.

8) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

10) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

25. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

26. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայքի ղեկավարը:

27. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

28. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:

29. Խմբակի ղեկավարը, դաստուն, գեղարվեստական ղեկավարը՝

1) ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի անդամների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբավարների հետ.

2) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանն է ներկայացնում անդամների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

31. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

32. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

33. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

34. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

35. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

36. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

37. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

38. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

39. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

40. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

41. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

42. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 202-Ա

ԳԵՂԱՇԵՆԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Գեղաշենի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴԻԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 202-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, մշակութային գործունեություն և կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հաստատությունը հանդիսանում է Գեղաշենի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 42.210.02793, վկայականի համար 03Ա088490, գրանցված է 07.04.2016թ.), որն էլ հանդիսանում է 23.07.2010 թվականին հիմնադրված ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի մշակույթի տուն բյուջետային հիմնարկի իրավահաջորդը (գրանցման համար՝ 42.210.02793, վկայական N 03Ա088490):

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, գյուղ Գեղաշեն, 2-րդ փողոց, թիվ 13, փոստային դասիչը՝ 2217:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Гегашенский дом культуры" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Гегашенский дом культуры" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ " Palace of culture in Geghashen village" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ " Palace of culture in Geghashen village" of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

8. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային, կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան է՝

1) բնակչության մշակութային պահանջմունքների բավարարումը.

2) հաստատության գործունեությունը հիմնվում է անձի համակողմանի մշակութային զարգացման, ազգային և համամարդկային արժեքների գուգորդման վրա.

3) ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդույթների պահպանումը, զարգացումը և տարածումը.

4) հաստատության կրթական գործունեությունը իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության.

5) հաստատությունը պատասխանատու է երեխաների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

12. Հաստատությունում գործունեության նպատակն է՝

1) տարբեր բնույթի մշակութային միջոցառումների՝ ցուցահանդեսների, մրցույթ-փառատոնների, կինոցուցադրումների կազմակերպումը.

2) ազգային, մշակութային արժեքների քարոզումը.

3) երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, դաստիարակության ապահովումը.

4) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը.

5) խմբակների միջոցով պատանիների և երիտասարդների՝ պարի, երաժշտության, արհեստների, թատերական, նկարչական և այլ ուղղվածության ուսուցման իրականացումը.

6) խմբակների միջոցով մարզական պարապմունքների իրականացումը.

13. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) ճամբարների կազմակերպում.

2) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական և մշակութային ծառայություններ՝ հիմնադրի սահմանած կարգով.

3) մշակութային ու մարզական այլ միջոցառումների կազմակերպում:

3 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Հաստատության կառուցվածքում ներառվում են՝

1) ժողստեղծագործության խմբակները.

2) երաժշտական բաժինը.

3) մարզական խմբակները.

4) գրադարանը:

15. Խմբակներում ու բաժիններում երեխաների քանակակազմը որոշում է հիմնադիրը:

16. Հաստատությունում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, որի տևողությունը չպետք է պակաս լինի 34 շաբաթից:

17. Հաստատության աշակերտների արձակուրդները հատկացվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցով:

18. Ուսումնառությունն ավարտած և համապատասխան գիտելիքներ ստացած սաներին կարող է հանձնվել վկայական՝ հաստատության կողմից սահմանված կարգին համապատասխան:

4.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

20. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

21. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

22. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

23. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.

8) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

10) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

25. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

26. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայքի ղեկավարը:

27. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

28. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:

29. Խմբակի ղեկավարը, դասատուն, գեղարվեստական ղեկավարը՝

1) ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի անդամների

շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբավարների հետ.

2) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանն է ներկայացնում անդամների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

31. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

32. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

33. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

34. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

35. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

36. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

37. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

38. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

39. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

40. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

41. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

42. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական

ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 203-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 203-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան 2022 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական, իրավական պաշտպանության, մանկավարժական աջակցության, դաստիարակչական ծրագրեր իրականացնող հաստատություն է (այսուհետ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 11.210.02309, վկայականի համար 03Ա071278, գրանցված է 28.02.2006թ.), որն էլ համարվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն բյուջետային հիմնարկի (պետական գրանցման) հաշվառման (համարը՝ 11.0112, վկայական Բ004221) իրավահաջորդը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է.

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Երեխաների աջակցության կենտրոն» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Центр поддержки детей" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Центр поддержки детей" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Children's support center" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Children's support center" of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին

կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8.Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9.Հաստատությունն կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

12. Հաստատության գործունեության նպատակը համայնքի մինչև 18 (տասնութ) տարեկան՝ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող (այսուհետ՝ ԿԴԻԳ) երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական, իրավական պաշտպանության, մանկավարժական աջակցության, դաստիարակչական, բարեգործական և այլ հանրօգուտ ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր) իրականացումն է:

13. Հաստատությունը բազմաֆունկցիոնալ սոցիալական ծառայությունների մատուցման կենտրոն է:

14. Հաստատության գործունեության առարկան է՝

1) նպաստել համայնքի՝ մինչև տասնութ տարեկան երեխաների առողջ զարգացմանը.

2) համագործակցելով երեխաների հիմնախնդիրների լուծման իրավասություն ունեցող պետական, համայնքային և այլ մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների հետ՝ հայտնաբերել ԿԴԻԳ երեխաներին.

3) կատարել ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-հոգեբանական վերականգնողական, անհատի հասարակությանը հարմարվելուն ուղղված աշխատանքներ.

4) իրականացնել ԿԴԻԳ երեխաների կարիքների գնահատում, մշակել յուրաքանչյուր երեխայի աջակցության աշխատանքների անհատական ծրագրեր.

5) նպաստել ԿԴԻԳ երեխաների աշխատանքային, մշակութային, սպորտային, գեղագիտական հմտությունների բացահայտման և ուսուցման կազմակերպմանը.

6) աջակցել կրթադաստիարակչական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու աշխատանքներին.

7) աջակցել համայնքի ԿԴԻԳ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին.

8) աջակցել առողջապահական, կրթական, մշակութային և այլ ոլորտների հաստատությունների ծառայություններից երեխաների օգտվելու հնարավորությունների մեծացմանը:

15. Հաստատությունն իր կանոնադրական խնդիրների արդյունավետ իրագործման նպատակով համագործակցում է ՀՀ պետական, համայնքային և ոչ պետական

մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ, իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր այդ կազմակերպությունների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

16. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

2) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.

3) ճամբարների կազմակերպում.

4) սպորտային միջոցառումների կազմակերպում.

5) ներկայացումների, համերգների, ցուցահանդեսների կազմակերպում.

6) մարզաձևերի, արվեստի տեսակների, զարդակիրառական արվեստի, արհեստների ուսուցման կազմակերպում:

Հաստատությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

17. Հաստատության շահառուներ կարող են հանդիսանալ այն երեխաները, ովքեր՝

1) գտնվում են կյանքի դժվարին իրավիճակներում.

2) ունեն խնդիրներ օրենքի հետ.

3) ունեն վարքային խնդիրներ և դասվել են «դժվար դաստիարակվող երեխաների» շարքին (փողոցի երեխա, կրթությունից խուսափող երեխա, մուրացկանությամբ զբաղվող երեխա, տնից փախուստի դիմող երեխա և այլն).

4) հայտնվել են ոստիկանության ուշադրության ներքո.

5) կոնֆլիկտի մեջ են հասակակիցների (մեծահասակների) հետ.

6) իրենց հատուկ կարիքների, այդ թվում՝ հաշմանդամության պատճառով դուրս են մնացել կրթությունից և այլ սոցիալական ծառայություններից.

7) ցանկացած երեխա, ով ունի աջակցության որևէ կարիք:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

18. Հաստատությունն իրականացնում է սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական պաշտպանության աջակցության ծրագրեր:

19. Հաստատության աշխատանքները կազմակերպվում են ծրագրերի պահանջներին և ժամանակացույցերին համապատասխան:

20. Հաստատությունը մշակում է գործունեության ծրագրերը՝ հաշվի առնելով ԿԴԻԳ երեխաների կարիքները, հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

21. Հաստատությունում աշխատանքների կազմակերպումն իրականացվում է երեխաների կարիքների և հնարավորությունների հիման վրա կազմված բազմամասնագիտական ծրագրերով:

22. Հաստատությունն մատուցում է կանխարգելման, վաղ միջամտության և

վերականգնողական ծառայություններ, որոնք ներառում են՝

1) սոցիալ-հոգեբանական աջակցություն անհատական, խմբային և ընտանեկան թերապիայի միջոցով.

2) կյանքի հմտությունների և սոցիալական կարողությունների (հնարավորությունների) ուսուցանում և զարգացում.

3) աջակցություն մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության հարցում.

4) հումանիտար և ֆինանսական աջակցության (ծայրահեղ իրավիճակների համար) տրամադրում.

5) բժշկական ծառայություն ստանալու մատչելիության ապահովում.

6) տեղեկատվության տրամադրում և ուղորդումներ.

7) երեխաների շահերի պաշտպանություն (ադվոկացիա).

8) ԿԴԻԳ երեխաների խախտված (խաթարված) իրավունքների վերականգնում և պաշտպանություն.

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

23. Հաստատությանն կառուցվածքն է՝

1) մասնագիտական աշխատանքային թիմ:

2) վարչատնտեսական բաժին.

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը և գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն)

25. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

26.Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

27. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը.

9) հաստատում է հաստատության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

10) Հաստատում է հաստատության հոգաբարձուների խորհրդի կազմը:

11) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

28. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

29. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2) սահմանում է հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

3) նախագահում է հաստատության մասնագիտական աշխատանքային թիմի նիստերը.

4) ՀՀ օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

5) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

7) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

8) կատարում է աշխատանքի բաշխում հաստատության աշխատողների միջև.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների

սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) իրականացնում է մասնագիտական թիմի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

11) հաստատում է հաստատության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

12) ապահովում է աշխատանքային կարգապահական ներքին կանոնների, աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը.

13) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

14) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը.

15) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

30. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից:

31. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

32. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորություններն իրականացում է այլ անձ:

33. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայքի ղեկավարը:

34. Տնօրենի մասնագիտական աշխատանքային գործառույթները ներառում են՝

1) ծրագրերի նպատակներից բխող կազմակերպչական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտման և վերլուծության, աշխատանքի մեթոդաբանության և գնահատման գործիքների մշակման, ինչպես նաև որոշումներ ընդունելու գործառույթների իրականացումը.

2) ծրագրերի աշխատանքների ամենօրյա կառավարումը, համակարգումը, ուղղորդումը, վերահսկումը.

3) ելնելով աշխատանքային նկարագրերից (պարտականություններից)՝ մասնագիտական թիմի անդամներին համապատասխան ցուցումներ հանձնարարականներ տալը.

4) անհատական և ընտանեկան աջակցության կազմակերպման գործընթացում որակյալ ծառայություն մատուցելու նպատակով մասնագիտական թիմին աջակցելը.

5) ծրագրերի շահառուներին բացահայտելու և ծրագրերում ընդգրկելու նպատակով մասնագիտական թիմին աջակցելը: Անհարժեշտության դեպքում՝ համագործակցելով պետական, համայնքային և ոչ պետական կառույցների հետ, ԿԴԻԳ երեխաների տեղավորման և ուղորդման կազմակերպումը.

6) հաստատության շահառու անչափահասների անվտանգության ապահովումը, նրանց հետ իրականացվող մասնագիտական աշխատանքների (խնդիրների բացահայտում, վերլուծություն, գնահատում, անմիջական աջակցություն) ընթացքի վերահսկումը.

7) շահառուների ընդունելության, հաշվառման, փաստաթղթերի և էլեկտրոնային ձևերի լրացման, տունայցերի կազմակերպման աշխատանքների համակարգումն ու վերահսկումը.

8) ծրագրերով նախատեսված միջոցառումների կազմակերպման և իրականացման համակարգումն ու վերահսկումը.

9) ծրագրերի ժամանակացույցով նախատեսված կարգով աշխատանքի արդյուքների վերլուծության և գնահատման իրականացումը, անհրաժեշտ հաշվետվությունների նախապատրաստումը.

10) ծրագրերի նպատակներին ռազմավարությանը համապատասխան՝ անհարժեշտ բանակցությունների վարումը.

11) ծրագրերի շահառուների դեպքերի վարման կառավարումը.

12) ծրագրերին առնչվող կամ շահագրգիռ՝ պետական, համայնքային և ոչ պետական տարբեր կառույցների հետ համագործակցության ապահովումը: Անհրաժեշտության դեպքում՝ ընդլայնված հանդիպումների, քննարկումների, կլոր սեղանների կազմակերպումը՝ նշված կառույցների պատասխանատուների, այլ մասնագետների, փորձագետների մասնակցությամբ.

13) մասնագիտական թիմի կողմից շահառուների անհատական փաթեթում ներառնվող և համակարգչային շտեմարանում պահպանվող փաստաթղթերի (անհատական պլան, գնահատման թերթիկ, մասնագիտական եզրակացություն, վիճակագրական տվյալներ և այլն) ժամանակին և ամբողջական լրացման, ամբողջական փաթեթի ստեղծման աշխատանքների վերահսկումը.

14) ոստիկանության մարմինների և այլ կառույցների հետ համատեղ իրականացվող գործունեության համակարգումն ու վերահսկումը.

15) մասնագիտական թիմի անդամների աշխատանքի գնահատումը, մասնագետների համար մեթոդական և հսկողական (սուպերվիզիոն) հանդիպումների պարբերաբար կազմակերպումը.

16) ծրագրերի ամենօրյա աշխատանքներում աշխատակիցներին աջակցելը.

17) ծրագրերի շահերից բխող այլ գործառույթների իրականացումը:

35. Հաստատության հոգեբանի գիտելիքներն ու հմտությունները՝

1) ունի հոգեբանի բարձրագույն կրթություն.

2) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

36. Հոգեբանի գործառույթներն են՝

1) ուսումնասիրել ԿԴԻԳ երեխայի նրա ընտանիքի հոգեբանական և առանձնահատկությունները և խնդիրները, իրականացնել հոգեբանական վիճակի գնահատում.

2) ծանոթանալ երեխայի սոցիալական պատմությանը.

3) յուրաքանչյուր երեխայի համար կազմել նրա հետ աշխատանքի անհատական պլան.

4) կազմակերպել անհատական հոգեբանական աշխատանքներ ԿԴԻԳ երեխայի հետ.

5) կազմակերպել խմբային աշխատանքներ երեխաների համար (թերապևտիկ, ուսումնական, ռելաքսացիոն և այլն).

6) երեխայի վարքի վերաբերյալ մեկնաբանություններ տրամադրել մասնագիտական թիմին .

7) հոգեբանական թերապիայի և խորհրդատվության նպատակով հանդիպումներ անցկացնել երեխաների ծնողների հետ.

8) անհրաժեշտության դեպքում սոցիալական աշխատողի հետ մասնակցել տունայցի.

9) հոգեբանական ծառայությունների և ռեսուրսների վերաբերյալ մասնագիտական թիմին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ.

10) տնօրենին երեխաների վերաբերյալ պարբերաբար տրամադրել նախնական,

ընթացիկ, անհետաձգելի ամբողջական տեղեկություն.

11) յուրաքանչյուր ուսումնասիրված երեխայի վերաբերյալ ներկայացնել գրավոր մասնագիտական եզրակացություն, պահպանելով այն համակարգչային բազայում և օրինակը կցել երեխայի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթին.

12) կատարել գրառումներ երեխաների օրագրերում՝ տվյալ օրը երեխայի (նրա ընատնիքի) հետ իրականացված աշխատանքի վերաբերյալ.

13) տնօրենին ներկայացնել պարբերական հաշվետվություններ.

14) կանոնավոր մասնակցել մասնագիտական վերապատրաստումներին, գիտապրակտիկ կոնֆերանսներին և ներկայացնել բարձր ռիսկի երեխաների հոգեբանական հիմնախնդիրները.

15) պարբերաբար վերլուծությունների ենթարկել հաստատության շահառուների հոգեբանական խնդիրները և դրանց միտումները, ներկայացնել առաջակություններ հետագա լուծումների վերաբերյալ.

16) գործել որպես թիմի անդամ՝ առաջնորդվելով հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, աջակցել թիմին ծրագրային խնդիրների լուծման հարցում.

17) իրականացնել այլ պարտականություններ, որոնք կբխեն ծրագրերի շահերից:

37. Հաստատության սոցիալական աշխատողի գիտելիքներն ու հմտությունները՝

1) ունի սոցիալական աշխատողի որակավորում և երեխաների հետ սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ սոցիալական մանկավարժի բարձրագույն կրթություն, կամ բարձրագույն կրթություն և երեխաների հետ սոցիալական աշխատանքի ոլորտում առնվազն երկու տարվա ստաժ.

2) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

38. Սոցիալական աշխատողի գործառույթներն են՝

1) աշխատել ծրագրերում ներգրավված երեխաների և նրանց ընտանիքների հետ այն նպատակով, որպեսզի իրականացվի կարիքների (սոցիալական իրավիճակի) համալիր գնահատում և սահմանվի հիմնական խնդիրները, որոնց բախվել է երեխան.

2) հավաքագրել համապատասխան տեղեկատվություն դեպքի վերաբերյալ՝ հարցազրույցների, փաստաթղթերի, դիտարկումների միջոցով, ինչպես նաև իրականացնել հարցազրույց շրջապատի և այլ համակարգերի հետ և կազմել գնահատման թերթիկ.

3) զարգացնել անհատական ծրագրերի պլան (միջամտության պլան) յուրաքանչյուր երեխայի համար՝ ստորագրված և համաձայնեցված յուրաքանչյուր երեխայի ընտանիքի չափահաս անդամի հետ՝ խորհրդատվության ժամանակ.

4) իրականացնել անհատական սոցիալ-հոգեբանական վերահսկողական աշխատանքներ երեխաների և նրանց ընտանիքների հետ.

5) իրականացնել անհատական ծրագրերով նախատեսված գործողությունները, ձեռնարկելով միջամտության տարբեր մեթոդներ (խմբային աշխատանք, ընտանեկան աշխատանք, ընտանեկան ժողովներ), անհրաժեշտության դեպքում՝ վարել ինքնօգնության խմբեր.

6) իրականացնել մասնագիտական խորհրդատվություն՝ մասնագիտական կողմնորոշման, կրթական համակարգի և այն ամենի մասին, որը կարող է օգնել երեխային հետագայում կրթություն ստանալ կամ աշխատել.

7) անհրաժեշտության դեպքում կազմակերպել տունայցեր, հանդիպումներ կրթական համակարգի ներկայացուցիչների՝ ուսուցիչների, ծնողների և դեպքի հետ առնչվող այլ մարդկանց ու ինստիտուտների հետ.

8) անհրաժեշտության դեպքում երեխայի կամ նրա ընտանիքի հետ աշխատելիս կատարել համապատասխան ձայնագրություններ, բոլոր տվյալները ներմուծել համակարգիչ՝ երեխայի համար նախատեսված հատուկ փաթեթում.

9) պլանավորված ժամանակահատվածում ամբողջականացնել բոլոր գրառումները, իրականացնել գնահատման պլանավորում և հաշվետվությունների կազմում.

10) համագործակցելով մասնագիտական թիմի հետ՝ կազմակերպել երեխայի և նրա ընտանիքի հետ թիմային աշխատանք.

11) կազմակերպել այցեր և հանդիպումներ երեխաների հետ աշխատող տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

39. Դեպքերի համատեղ վարման ժամանակ սոցիալական աշխատողի աշխատանքը տնօրենի կամ հոգեբանի կողմից պարբերաբար ենթարկվում է մասնագիտական հարցերի շուրջ հսկողության (սուպերվիզիայի):

40. Սոցիալական աշխատողը երեխաների հետ աշխատում է ծրագրերով նախատեսված ժամերին, սակայն, որպես կանոն, անհատական և ընտանեկան աշխատանքներն իրականացվում են դպրոցի պարապմունքներն ավարտվելուց հետո:

41. Տնտեսվարի գործառույթներն են՝

1) իրականացնում է հաստատության տնտեսական սպասարկման աշխատանքների ղեկավարումը.

2) ապահովում է տնտեսական գույքի պահպանությունը, դրանց վերականգնումը և համալրումը, ինչպես նաև շենքի (շինությունների) և դրան հարող տարածքի մաքրությունը.

3) հետևում է շենքի (շինությունների) վիճակին և միջոցներ է ձեռնարկում դրանց ժամանակին վերանորոգման համար.

4) աշխատողներին ապահովում է գրասենյակային պարագաներով և տնտեսական առօրյա ապրանքներով.

5) պատասխանատու է հակահրդեհային պաշտպանության ապահովման համար.

6) ղեկավարում է սպասարկող անձնակազմի աշխատանքը:

7. ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

42. Հաստատության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև ծրագրերին աջակցելու և համայնքային, պետական և այլ մարմինների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով հաստատությունում ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ հոգաբարձուների խորհուրդ:

43. Հոգաբարձուների խորհրդի կազմում կարող են ընդգրկվել հաստատության գործունեությամբ շահագրգիռ անձինք, կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ, պետական իշխանության ներկայացուցիչներ:

44. Հոգաբարձուների խորհուրդը կազմվում է առնվազն հինգ հոգաբարձուներից:

45. Տնօրենի ներկայացմամբ (առաջադրված թեկնածուների հետ համաձայնեցնելուց հետո) հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատում է համայնքի ղեկավարը:

46. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավասու է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

47. Հոգաբարձուների խորհրդի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստեր գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու

անգամ: Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են:

48. Տնօրենը հոգաբարձուների խորհրդի նիստերին մասնակցում է առանց քվեարկելու իրավունքի:

49. Հոգաբարձուների խորհուրդը՝

1) օժանդակում է հաստատության համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը.

2) նպաստում է հաստատության կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հաստատության կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը.

3) հաստատում է իր կողմից հաստատության արտաբյուջետային հաշվին մուտքագրված ֆինանսական միջոցների ծախսերի նախահաշիվը.

4) աջակցում է սոցիալական ծրագրերի իրականացմանն ու երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը.

5) լսում է իր հատկացրած միջոցների նպատակային ծախսման վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը.

6) մասնակցում է հաստատության գործունեության ծրագրերի քննարկմանը.

7) օժանդակում է համայնքային, պետական և այլ մարմինների հետ հաստատության համագործակցությանը, միջազգային կապերի ստեղծմանը:

50. Հոգաբարձուների խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է ավագ հոգաբարձու՝ մեկ տարի ժամկետով:

51. Ավագ հոգաբարձուն՝

1) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, հրավիրում է խորհրդի նիստ և վարում այն.

2) հոգաբարձուների խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է հոգաբարձուների խորհրդի կողմից իրեն տրված լիազորությունները:

52. Հոգաբարձուների խորհրդի տրամադրած ֆինանսական միջոցները մուտքագրվում են հաստատության արտաբյուջետային հաշվին և կարող են օգտագործվել հաստատության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը, ինչպես նաև աշխատողներին հավելավճարների տրամադրմանը: Այդ միջոցների օգտագործումը կառավարում է հաստատության տնօրենը՝ հոգաբարձուների խորհրդի հաստատած արտաբյուջետային միջոցների ծախսերի նախահաշվին համապատասխան: Խոշոր միանվագ մուծումների դեպքում՝ հոգաբարձուների խորհուրդը հաստատությանը կարող է առաջարկել նպատակային ծրագրեր:

8. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

53. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքնով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

54. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

55. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած

գույքի:

56. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

57. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

58. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

59. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականություններն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման և կարգը որոշում է համայնքի ավագանին:

60. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

61. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

62. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

1) հիմնադիրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները ՀՀ օտարերկրյա և կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

63. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել՝ աուդիտի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

64. Հաստատության շահույթը նպատակաուղղված է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

65. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

9. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

66. Հաստատությունը վերակազմակերպվում կամ լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 204-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Աբովյանի համայնքային գրադարան» մշակութային հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Աբովյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Աբովյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 204-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան - 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Աբովյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մշակութային, կրթական, տեղեկատվական գործունեություն իրականացնող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հասատությունը հանդիսանում է «Աբովյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 1121002504, վկայականի համարը 03Ա077682, գրանցված է 23.08.2007թ.) որն էլ համարվում է 18.05.1999 թվականից ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Համայնքային գրադարան բյուջետային հիմնարկի իրավահաջորդը (գրանցման N 11.0138, վկայական N Բ 004640):

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին», «Մշակութային օրենսդրության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Տարտուի 1/24 փողոց:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Աբովյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Աբովյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ - "Абовянская общинная библиотека" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Абовянская общинная библиотека" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Communal Library in Aabovyan" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Communal Library in Aabovyan" of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան և նպատակներն են՝ ազգային, արտասահմանյան տպագիր արտադրանքի՝ հավաքածուի պահպանումը, համալրումը, մշակումը, գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական սպասարկման կազմակերպումը, գրադարանային կադրերի վերապատրաստումը, ինչպես նաև գրադարանների զարգացման գիտամեթոդական գործունեության ապահովումը:

1) հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման է տրամադրում գրադարանային փաստաթղթերը.

2) ցուցակագրում, դասակարգում և կազմում է գրադարանի հավաքածուի գրացուցակը և մատենագիտությունը.

3) ապահովում է գրադարանի հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը.

4) ապահովում է գրադարանից օգտվողների համար որակյալ ծառայությունների մատուցումը.

5) նպաստում է կրթությանը, խթանում է ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին.

6) ներդնում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ:

13. Հաստատությունն իր գործունեության նպատակներին համապատասխան՝

1) ձևավորում և օգտվողներին է տրամադրում ազգային, արտասահմանյան տպագիր արտադրանքի հավաքածուն առանց սահմանափակումների, նրանց պահանջարկին համապատասխան.

2) իրականացնում է գրադարանային, տեղեկատվական-մատենագիտական, մասնագիտական աշխատանք, գրադարանից օգտվողներին տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն.

3) իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի համալրում՝ ձեռքբերումների, նվիրաբերումների, գնման և փոխանակումների միջոցով.

4) հաշվառում, մշակում, համակարգում է մուտքագրվող նյութերը և գրանցում դրանց վերաբերյալ տեղեկությունը թղթային և էլեկտրոնային կրիչների շտեմարաններում.

5) գրադարանային հավաքածուները գրադարանների կողմից վերցվում են մշտական պահպանության, որը ներառում է անվտանգ պահպանության ապահովումը և վերականգնման աշխատանքների իրականացումը.

6) սահմանում է գրադարանից օգտվելու կարգը, օգտվողների կողմից պատճառված վնասների փոխհատուցման ձևերն ու չափերը.

7) որոշում է համալրվող գրականության տեսականին.

8) լիազոր մարմնի համաձայնությամբ իրականացնում է հավաքածուից օգտագործման

համար ոչ պիտանի տպագիր արտադրանքի դուրսգրումը, բացառությամբ պատմամշակութային արժեքների.

9) համագործակցում է ՀՀ և արտերկրի գրադարանների, մասնագիտական, տեղեկատվական կազմակերպությունների հետ՝ մշակութային, կրթադաստիրակչական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:

14. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական և հետազոտական ծառայություններ՝ հիմնադրի սահմանած կարգով,

2) մշակութային այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

15. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

16. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

17. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

18. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է

տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.

8) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

10) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

21. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

22. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

23. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:

24. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայքի ղեկավարը:

25. Հաստատության տնտեսական մասի վարիչը՝

1) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, նյութատեխնիկական ապահովման, սանիտարահիգիենիկ և բարեկարգ վիճակի,

հակահրդեհային պաշտպանության անվտանգության համար:

26. Հաստատության աշխատողների իրավունքները ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով հաստատության առանձին բաժինների ու աշխատանքային ներքին կանոնակարգով ու իրավական այլ ակտերով:

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

27. Հաստատության կառուցվածքն է՝

1) մանկական գրականության բաժին.

2) գեղարվեստական գրականության բաժին.

3) մասնագիտական գրականության բաժին.

4) ընթերցասրահի բաժին:

28. Գրադարանային գործընթացի մասնակիցներն են՝

1) գրադարանի աշխատողները.

2) ընթերցողները:

29. Գրադարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշներն են՝

1) գրադարանավար՝ միջին մասնագիտական կրթություն առանց աշխատանքային փորձի պահանջի, կամ միջնակարգ կրթություն համապատասխան վերապատրաստմամբ.

2) երկրորդ կարգի գրադարանավար՝ բարձրագույն կրթություն բակալավրի աստիճանով՝ առանց աշխատանքային փորձի պահանջի, կա միջին մասնագիտական կրթություն և առնվազն 3 տարվա գրադարանավարի աշխատանքային, փորձ.

3) առաջին կարգի գրադարանավար՝ «Գրադարանային տեղեկատվություն և մատենագիտություն» կամ «Գրադարանավար-մատենագետ, մանկավարժ» մասնագիտությամբ բակալավրի աստիճան և առնվազն 1 տարվա երկրորդ կարգի գրադարանավարի աշխատանքային փորձ, կամ բարձրագույն կրթություն և առնվազն 3 տարվա երկրորդ կարգի գրադարանավարի աշխատանքային փորձ:

30. Գրադարանի ծառայություններից օգտվողները պարտավոր են պահպանել գրադարանի ծառայություններից և գրադարանային հավաքածուից օգտվելու կանոնները:

31. Հաստատության աշխատողների իրավունքները սահմանվում են օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, և ներքին կարգապահական կանոններով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

32. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

33. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

34. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

35. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

36. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

37. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

38. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

39. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

40. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

41. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության՝ լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները.

4) ուսումնադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

42. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

43. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

44. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

45. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 205-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ ՋԱՐԵՀ ՍԱՀԱԿՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Աբովյանի քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Աբովյանի քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 205-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԵՀ ՍԱՀԱԿՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք.Աբովյան - 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հաստատությունը հանդիսանում է «Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 1121002298, վկայականի համար 03Ա070632, գրանցված է 21.02.2006թ.), որը 12.12.1996 թվականից հանդիսանում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Զ. Սահակյացի անվան երաժշտական դպրոց բյուջետային հիմնարկի (գրանցահամարը՝ 11.0054, վկայական՝ N Բ 001150) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ ք. Աբովյան, օգոստոսի 23-ի փողոց:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Музыкальная школа города Абовяна имени Зарэ Саакяница" общынная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Музыкальная школа города Абовяна имени Зарэ Саакяница" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ " Musical school after Zareh Sahakyants in Abovyan city" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Musical school after Zareh Sahakyants in Abovyan city" of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին

կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ:Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

13. Հաստատությունը պատասխանատու է կրթական չափորոշիչներին համապատասխան, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունների, հակումների և ընդունակությունների համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության համար:

14. Հաստատության գործունեության նպատակը՝

1) երաժշտական նախնական մասնագիտական կրթության և դաստիարակության իրականացումն է: Սովորողների հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, որը նպատակաուղղված է նրանց հոգևոր և գեղագիտական նախասիրությունների զարգացմանը.

2) իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստել օժտված և տաղանդավոր երեխաների համապատասխան ուղղվածության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար.

3) ազգային մշակութային արժեքների քարոզումը.

4) սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, դաստիարակության ապահովումը.

5) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

2) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել մշակութային, կրթական և գեղագիտական դաստիարակության վճարովի ուսուցում՝ հիմնադրի սահմանած կարգով.

3) բնակչության տարբեր տարիքային խմբերի համար երաժշտական ուսուցողական ծրագրերի իրականացում.

4) մշակութային այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատությունում գործում են՝ դաշնամուրային, վոկալ, լարային, փողային, ժող. գործիքների ուսուցման և այլ բաժիններ:

17. Բաժինները կարող են ունենալ ղեկավարներ:

18. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ծրագրերի և ժամանակացույցի համապատասխան:

19. Հաստատության երեխաների թվակազմը և առաջին դասարանի ընդունելության քանակը որոշում է հիմնադիրը:

20. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, որի տևողությունը չպետք է պակաս լինի 34 շաբաթից: Հաստատությունում սահմանվում է 6-օրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

21. Հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և գիտելիքների ստուգում անցած սաներին հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական):

4. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

22. Հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները) և մանկավարժական աշխատողները:

23. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստատղթերին, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

24. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

25. Երեխայի և հաստաատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

26. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձիք, ովքեր ունեն բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ:

27. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը և գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

29. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

30. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

31. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

32. Համայնքի ղեկավարը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

7) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

8) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

33. Հաստատությունը ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ

կազմակերպման նպատակով ձևավորում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

34. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

35. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

36. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

37. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

38. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի փոխհատուցման համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Ուսումնական գծով փոխտնօրենը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների վերջնարդյունքի համար.

2) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

4) ընդհանրացնում և տարածում է լավագույն մանկավարժների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

5) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:

41. Մանկավարժը՝

1) աշխատանք է տանում երեխաների երաժշտական մասնագիտական կրթության, նրանց համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

2) կազմում է երաժշտական մասնագիտական կրթության պետական չափորոշիչներին համապատասխան ծրագրեր և աշխատում դրանց իրականացման համար.

3) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

42. Տնտեսական մասի վարիչը՝

1) կազմակերպում է դպրոցի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) հետևում է դպրոցի շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

3) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

49. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) կրթադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

54. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

55. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

56. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 206-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Աբովյանի գեղարվեստի դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 206-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան - 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հաստատությունը հանդիսանում է «Աբովյանի գեղարվեստի դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համարը 11.21002314, վկայականի համար 03Ա071283, գրանցված է 02.03.2006թ.), որը հանդիսանում է 07.05.1999 թվականից Աբովյանի քաղաքապետարանի մանկական գեղարվեստի դպրոց բյուջետային հիմնարկի (գրանցահամարը՝ 11.0137, վկայական՝ N Բ 004637) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 3-րդ մ/շ, 1/5/1:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Художественная школа города Абовяна" общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Художественная школа города Абовяна" ОНКО Абовянской общины.

3) անգլերեն լրիվ՝ "Art school in Abovyan city" of Abovyan Community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Art school in Abovyan city" of Abovyan Community NPCO.

6.Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ

անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8.Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9.Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան՝

1) սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը.

2) սովորողների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, նրանց առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը.

3) հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

13. Հաստատության գործունեության հիմնական նպատակներն են՝

1) արվեստաբանության, կերպարվեստի, դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի տարբեր ճյուղերի ուսուցումը.

2) ազգային մշակութային արժեքների քարոզումը.

3) սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական դաստիարակության ապահովումը.

4) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

5) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը.

6) ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների զարգացումը.

7) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

14. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

2) համակարգչային ձևավորման (դիզայն) ծրագրերի ուսուցում.

3) ճամբարների կազմակերպում.

4) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում՝ հիմնադրի սահմանած կարգով.

5) ցուցահանդեսների և մշակութային այլ միջոցառումների կազմակերպում:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցի համապատասխան:

16. Հաստատությունը գործում է դաս-դասարանային համակարգով:

17. Դպրոցում յուրաքանչյուր սովորողի համար կարող են կազմակերպվել անհատական պարապմունքներ՝ ուսումնական պլանին համապատասխան տևողությամբ:

18. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից, որի տևողությունը չպետք է պակաս լինի 34 շաբաթից: Հաստատությունում սահմանվում է 6-օրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

19. Հաստատությունը դասարաններ կարող է հիմնել այլ հիմնարկներում, հանրակրթական դպրոցներում, սաների բնակության վայրերում:

20. Հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և գիտելիքների ստուգում անցած սաներին հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական):

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍՏԻԱՐԱԿԱՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

21. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) սաները.

2) ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները).

3) մանկավարժները:

22. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը: Սաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու հաստատության ներքին կարգապահական կանոններով:

23. Անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է հաստատության կանոնադրությամբ:

24. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձիք, ովքեր ունեն բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ:

25. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

26. Հաստատության մանկավարժները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

27. Հաստատությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

28. Սանը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

29.Հաստատության սաների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30.Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

31. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

32. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

33. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

34. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ

կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

35. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

36. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) կատարում է աշխատանքի բաշխում իր աշխատակիցների միջև.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

37. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

38. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:

40. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

41. Հաստատության փոխտնօրենը (ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը)՝

1) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և

սաների գիտելիքների վերջնարդյունքի համար.

2) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

4) ընդհանրացնում և տարածում է լավագույն մանկավարժների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

5) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:

42. Հաստատության տնտեսական մասի վարիչը՝

1) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, սանիտարահիգիենիկ և բարեկարգ վիճակի, ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

2) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

43. Դասարանի ղեկավարը՝

1) ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում իր սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս դասարանների ղեկավարների հետ.

2) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

48. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

50. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Ընդում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում

նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

52. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

53. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ուսումնադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

54. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

55. Հաստատության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

56. Հաստատության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

57. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 207-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Աբովյանի շախմատի դպրոց» ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 207-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Աբովյան - 2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շախմատ մարզաձևի ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն):

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Հաստատությունը հանդիսանում է «Աբովյանի շախմատի դպրոց» ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը (գրանցման համար՝ 11.210.02417, վկայականի համար՝ 03Ա074724, գրանցված 29.12.2006թ. /11.10.2010թվականին կատարվել է կանոնադրության փոփոխություն/):

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Հանրապետության պողոտա 1/85:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ "Шахматная школа города Абовяна" некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ "Шахматная школа города Абовяна" ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Chess School in Abovyan city" of Abovyan community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Chess School in Abovyan city" of Abovyan community NPCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված մարմնի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական մարզական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ (կամ) կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան և նպատակը երեխաների և պատանիների շրջանում շախմատի ուսուցումն է:

13. Քաղաքային, հանրապետական և միջազգային մրցաշարերի կազմակերպումն ու անցկացումը:

14. Հաստատությունն իրավունք ունի՝ կազմակերպել ուսումնամարզական հավաքներ՝ համաքաղաքային, հանրապետական և միջազգային մրցումներին նախապատրաստվելու համար:

15. Հաստատությունն ապահովում է սովորողների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, նրանց առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատության հիմնական նպատակներն են՝

1) սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.

2) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների զարգացումը:

4) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը.

5) շախմատ մարզաձևի վարպետության ուսումնամարզական ծրագրերի մշակումն ու իրականացումը.

6) շախմատ մարզաձևի մասսայականացումն ու զարգացումը:

18. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.

2) մրցաշարերի և ուսումնամարզական հավաքների կազմակերպում.

3) իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական ծրագրեր՝ հիմնադրի սահմանած կարգով:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

19. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցի համապատասխան:

20. Հաստատությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու ունակությունները:

21. Սաներն ընդգրկվում են հաստատության համապատասխան խմբերում՝ ըստ առաջադիմության:

22. Խմբերում պարապմունքները անց են կացվում շաբաթական 2-3 անգամ:

23. Յուրաքանչյուր ուսումնամարզական խմբում պետք է ընդգրկվի առնվազն 4-12 սովորող:

24. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընացքում: ՈՒսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, որի տևողությունը չպետք է պակաս լինի 32 շաբաթից: Հաստատությունում սահմանվում է 5-օրյա աշխատանքային շաբաթ:

25. Հաստատությունը խմբակներ կարող է հիմնել այլ հիմնարկներում հանրակրթական դպրոցներում, սաների բնակության վայրերում:

26. Հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառություն անցած, համապատասխան մարզական աստիճան ձեռք բերած սաներին հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական):

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

27. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) սաները.

2) ծնողները.

3) մանկավարժական աշխատողները:

28. Սովորողների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մանկապատանեկան հաստատության գործունեությունը: Սաների իրավունքները և պարտականությունները՝ սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու հաստատության ներքին կարգապահական կանոններով:

29. Հաստատության անձակազմի համալրման կարգը կանոնակարգվում է կանոնադրությամբ:

30. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձիք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտական որակավորում:

31. Հաստատության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

32. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

33. Հաստատությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

34. Սանը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

35. Հաստատության սաների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

36. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

37. Հաստատության հիմադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

38.Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը.

8) լուծարման հաշվեկշռի հաստատումը.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

39. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ

գործառույթներ:

40. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, ծնողական) մարմիններ:

41. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

9) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

10) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

42. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

43. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը և պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

44. Տնօրենին օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և ազատում է համայքի ղեկավարը:

45. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, նրա լիազորությունները իրականացնում է այլ անձ:

46. Հաստատության փոխտնօրենը (ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը)՝

1) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի

կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների վերջնարդյունքի համար.

2) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

4) ընդհանրացնում և տարածում է լավագույն մանկավարժների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

5) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:

47. Հաստատության տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը (կամ տնտեսվարը)՝

1) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, ուսումնական պարապմունքների՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

2) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

48. Նախմատի մարզիչ-մանկավարժը՝

1) ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբերի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մարզիչ-մանկավարժների հետ.

2) իրականացնում է խմբերի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

3) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

49. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

50. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

51. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

52. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

53. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

54. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատության ամրացված գույքը:

55. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

56. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

57. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից կատարվող հատկացումներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

58. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ուսումնադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված, հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

59. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

60. Հաստատության շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրության խնդիրների իրականացմանը նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

61. Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

62. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 208-Ա

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի,102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Աբովյան համայնքի ղեկավարի առաջարկին՝ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկը Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և անվանափոխելու վերաբերյալ:
2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով սկսել «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկը Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 209-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 71/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Սասուն Յուրիկի Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 05-ի N Ք-3845), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Սասուն Յուրիկի Գրիգորյանին պատկանող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 16-ի N 19072021-07-0012 վկայական) Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 71/7 հասցեում գտնվող 07-002-0039-1546 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության (հիմք՝ Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի N 1356 որոշում) 420.97 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 04-ի N 04082022-07-0105 վկայական) Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 71/8 հասցեում գտնվող 07-002-0039-1680 կադաստրային ծածկագրով 152.7 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0039-1546 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Սասուն Յուրիկի Գրիգորյանին:

2. Սասուն Յուրիկի Գրիգորյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 605 458 (մեկ միլիոն վեց հարյուր հինգ հազար չորս հարյուր հիսունութ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սասուն Յուրիկի Գրիգորյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սասուն Յուրիկի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Արովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 210-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 7-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 101/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԻԼԻԹ ՍԱՀԻՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 3-րդ ենթակետերի և 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և N 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Լիլիթ Սահինյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի N Ք-6374), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Լիլիթ Պարույրի Սահինյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 16-ի N 16052022-07-0195 վկայական) Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամասի թիվ 101 հասցեում գտնվող 07-002-0030-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 510.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 30112022-07-0136 վկայական) Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամասի թիվ 101/1 հասցեում գտնվող 07-002-0030-0181 կադաստրային ծածկագրով 64.3 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0030-0003 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Լիլիթ Պարույրի Սահինյանին:

2. Լիլիթ Սահինյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 439 446 (չորս հարյուր երեսունինը հազար չորս հարյուր քառասունվեց) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար.

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Լիլիթ Սահինյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Սահինյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՌԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Արովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 211-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՍԻԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԹՈՒՐ ՄԵՂՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 4-րդ ենթակետերի և 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և N 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Արթուր Մեղրյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N Ք-6520), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Արթուր Պետրոսի Մեղրյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 17112022-07-0036 վկայական) Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի թիվ 10/2 հասցեում գտնվող 07-002-0050-0333 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 30.48 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի N 13122022-07-0149 վկայական) Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի թիվ 10/3 հասցեում գտնվող 07-002-0050-0334 կադաստրային ծածկագրով 5.6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0050-0333 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Արթուր Պետրոսի Մեղրյանին:

2. Արթուր Մեղրյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 90 589 (իննսուն հազար հինգ հարյուր ութսունինը) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Արթուր Մեղրյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Մեղրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՉԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՉԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 212-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 07-013-0128-0069 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 3-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն որոշման և հիմք ընդունելով Ալվարդ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 24-ի N Ք-6028), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Ալվարդ Բաբկենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մարտի 28-ի N 28032022-07-0089 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0128-0067 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 6285.0 քառակուսի մետր մակերեսով վարելահողին կից Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 15-ի N 15082022-07-0118 վկայական) Արամուս գյուղում գտնվող 07-013-0128-0069 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 1269.2 քառակուսի մետր մակերեսով այլ հողատեսքը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-013-0128-0067 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Ալվարդ Բաբկենի Հակոբյանին:

2. Ալվարդ Հակոբյանը պարտավոր է.

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ՝ ընդլայնվող հողամասի արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Ալվարդ Հակոբյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՉԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 213-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԱՁՈՐԻ ԽՃՈՒՂՈՒ 4/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

5. Կարգի մշակման համար ինստիտուցիոնալ հիմք են հանդիսացել հետևյալ իրավական ակտերը՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» N 264-Ն որոշումը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» N 102 հրամանը, ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 787-Ն և 2016թ. հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 2-Ն հրամանները, և այլ օրենսդրական ակտերի կարգավորումները:

II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Կարգի հիմնական խնդիրներն են՝

1) Նկարագրել համայնքի ՏԻՄ-երի կողմից գույքագրման կազմակերպման և անցկացման գործընթացի հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների, լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը.

2) Ներկայացնել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (շարժական և անշարժ) ընդհանուր նկարագրությունը.

3) ՏԻՄ-երի համար ներկայացնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» N

102 հրամանով և ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» №2-Ն հրամանով հաստատված կարգերի պահանջներից բխող փաստաթղթերի՝ ակտերի, գույքագրման ցուցակների և գույքագրման անցկացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի տեղայնացված օրինակելի ձևերը.

4) Համայնքային գույքի հաշվառման, պահպանման, տնօրինման ու օգտագործման համայնքային միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակումը և դրանց իրականացումը.

5) Համայնքային գույքի կառավարման գործընթացների մեթոդական ապահովումը.

6) Ներկայացնել գույքագրման կազմակերպման և անցկացման գործընթացում համայնքի ՏԻՄ-երի կողմից ընդունվող իրավական ակտերի շրջանակը, դրանց մշակման, քննարկման և ընդունման ընթացակարգերը.

7) Նկարագրել գույքագրման անցկացման ընդհանուր կանոնները.

8) Ներկայացնել գույքագրման արդյունքում հայտնաբերված համայնքի սեփականություն հանդիսացող օգտագործման համար ոչ պիտանի գույքի դուրսգրման, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վերագնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման իրավակարգավորումները և ընթացակարգերը.

9) Ներկայացնել գույքագրման ընթացքում համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նպատակային օգտագործման նկատմամբ գործառույթներ իրականացնող համայնքային պաշտոնատար անձի (անձանց) կողմից վերահսկողական բնույթի իրավասությունները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց տնօրինմանը հանձնված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նպատակային օգտագործման և նրանց կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ:

7. Համայնքային գույքի կառավարման նպատակներն են.

1) համայնքային գույքի կառավարման (տնօրինում, տիրապետում, օգտագործում, այդ թվում և գույքի գրավադրում) արդյունավետության բարձրացում,

2) համայնքի եկամուտների ավելացում,

3) համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:

8. **Համայնքային գույքի կառավարման սկզբունքներն են.**

1) համայնքային գույքի՝ կառավարման յուրաքանչյուր օբյեկտի (օբյեկտների խմբի) ծրագրային ժամանակահատվածի համար կառավարման նպատակի (նպատակների) սահմանում և ամրագրում.

2) կառավարման արդյունավետության շարունակական ապահովում, որը պարտադիր է ՏԻՄ-երի և համայնքային կազմակերպությունների գործունեության գնահատման ժամանակ.

3) կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

4) համայնքային գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

5) գույքի որակական հատկանիշների պահպանումը.

6) համայնքային կարիքները և համայնքի կայուն կենսագործունեությունը բավարարող գույքը հիմնականում ենթակա չէ մասնավորեցման:

III. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ

9. Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը ենթակա է ամենամյա պարտադիր գույքագրման:

10. Գույքագրումն իրականացվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, որը պետք է պարունակի դրույթներ համայնքային գույքագրման հանձնաժողովի, գույքագրման մեկնարկի և ավարտի ժամկետների մասին՝ կախված համայնքային գույքի ծավալից:

11. Գույքագրման և հաշվառման ենթակա են համայնքի բոլոր ակտիվները և պարտավորությունները: Մինչև փաստացի գույքագրում սկսելը, համայնքային գույքի գույքագրման հանձնաժողովը պետք է ստանա գույքագրումը սկսելու պահի դրությամբ համայնքի ակտիվների մուտքի և ելքի վերջին բոլոր փաստաթղթերը:

12. Նյութական պատասխանատու անձինք տալիս են հայտարարություն այն մասին, որ մինչև գույքագրում սկսելը, համայնքի ակտիվների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն:

13. Գույքագրման հանձնաժողովն ապահովում է համայնքի ակտիվների ու պարտավորությունների փաստացի մնացորդների ամբողջական և ճշգրիտ գրանցումը գույքագրման ցուցակներում:

14. Գույքագրման աշխատանքներն իրականացնելիս համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել բոլոր պայմանները՝ սահմանված ժամկետներում գույքի փաստացի առկայության լրիվ և ճիշտ ստուգումն ապահովելու համար:

15. Համայնքի ակտիվների փաստացի առկայության ստուգումը կատարվում է նյութական պատասխանատու անձի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա մասնակցության ապահովումն անհնարին է:

16. Գույքագրման ցուցակները կարող են կազմվել ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր տեսքով:

17. Գույքագրվող ակտիվների անվանումը և չափի միավորները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվառման մեջ ընդունված անվանացուցակին և չափի միավորներին:

18. Գույքագրման ցուցակները ստորագրում են գույքագրման հանձնաժողովի բոլոր անդամները և նյութական պատասխանատու անձինք: Գույքագրման յուրաքանչյուր ցուցակի վերջում նյութական պատասխանատու անձինք գրառում են կատարում՝ ակտիվների ստուգումը գույքագրման հանձնաժողովի կողմից իրենց ներկայությամբ իրականացնելու, գույքագրում իրականացնող աշխատակիցների նկատմամբ որևիցե բողոք չունենալու և ցուցակում նշված ակտիվները ի պահ ընդունելու վերաբերյալ:

19. Համայնքային անշարժ գույքի հաշվառում է համարվում համայնքային անշարժ գույքի վիճակի և չափերի, նպատակային նշանակության, ինչպես նաև օգտագործողների և օգտագործման ձևերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը:

20. Համայնքային գույքի գույքագրման փաստաթղթերը պետք է արտացոլվեն համայնքի հաշվեկշռում:

21. Համայնքային անշարժ գույքի հաշվառման ենթակա օբյեկտներ են համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքը՝ հողամասերը, շենքերը, շինությունները, տարածքները, արհեստական կառույցները և այլ անշարժ գույքը:

22. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տեղեկություններն օգտագործվում են անշարժ գույքի մշտադիտարկման համար, որի նպատակն է բարելավել համայնքային անշարժ գույքի օգտագործումը և պահպանումը, կանխատեսել համայնքային անշարժ գույքի նկատմամբ համայնքի հեռանկարային պահանջը:

23. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տվյալների հավաստիության բարձր մակարդակն ապահովելու նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով և ժամկետներում իրականացվում է անշարժ գույքի գույքագրում, որը հաստատվում է Աբովյան համայնքի ավագանու կողմից:

24. Սույն բաժնով սահմանված դրույթները տարածվում են Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի հաշվառման և գույքագրման իրավահարաբերությունների վրա:

25. **Հիմնական միջոցների գույքագրում**

25.1. Մինչև գույքագրում սկսելը պետք է ստուգել.

ա) վերլուծական հաշվառման գրանցամատյանների (գույքային քարտեր, գույքային գրքեր, գույքային ցուցակներ և այլն) առկայությունը և վիճակը,

բ) գույքի տեխնիկական անձնագրերի և տեխնիկական այլ փաստաթղթերի առկայությունը և վիճակը,

գ) վարձակալության հանձնված կամ վարձակալված, ինչպես նաև ի պահ հանձնված կամ ընդունված հիմնական միջոցների փաստաթղթերի առկայությունը: Փաստաթղթերի բացակայության դեպքում անհրաժեշտ է ապահովել դրանց ստացումը կամ ձևակերպումը:

25.2. Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հանձնաժողովը զննում է օբյեկտները և գույքագրման ցուցակներում գրանցում դրանց լրիվ անվանումները, համառոտ բնութագիրը (նշանակությունը, հիմնական տեխնիկական կամ շահագործման ցուցանիշները և այլն), թողարկման (կառուցման) տարեթիվը, գույքային, գործարանային և անձնագրային համարները:

25.3. Հիմնական միջոցների (այդ թվում հողամասերի, ջրավազանների և բնական ռեսուրսների այլ օբյեկտների) գույքագրման ժամանակ հանձնաժողովը ստուգում է հիմնական միջոցների օբյեկտների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի առկայությունը:

25.4. Հաշվառման մեջ չվերցված կամ այնպիսի օբյեկտների բացահայտման դեպքում, որոնց գծով հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում բացակայում են կամ նշված են դրանք բնութագրող ոչ ճիշտ տվյալներ, հանձնաժողովը պետք է գույքագրման ցուցակներում գրանցի այդ օբյեկտների վերաբերյալ ճշգրտված տվյալներ:

25.5. Գույքագրմամբ բացահայտված չհաշվառված օբյեկտների գնահատումը պետք է կատարվի՝ ելնելով հաշվապահական հաշվառման քաղաքականությունից՝ հիմնվելով համայնքում առկա համանման օբյեկտների գների կամ դրանց իրական արժեքների վրա:

25.6. Հիմնական միջոցները գույքագրման ցուցակներում գրանցվում են ըստ անվանումների՝ օբյեկտի հիմնական նշանակությանը համապատասխան: Եթե նախորդող գույքագրումից հետո փոփոխվել է օբյեկտի հիմնական նշանակությունը, ապա օբյեկտը գույքագրման ցուցակում գրանցվում է նոր նշանակությանը համապատասխան:

25.7. Գույքագրման պահին համայնքի տարածքից դուրս գտնվող հիմնական միջոցները գույքագրվում են մինչև դրանց ժամանակավոր բացակայությունը կամ համայնք վերադարձնելուց անմիջապես հետո:

25.8. Շահագործման և վերականգնման համար ոչ պիտանի հիմնական միջոցների համար գույքագրման հանձնաժողովը կազմում է առանձին գույքագրման ցուցակ՝ նշելով դրանց շահագործման հանձնելու ամսաթիվը և ոչ պիտանիության վիճակին հասնելու պատճառները (լրիվ մաշվածություն, փչացում և այլն):

25.9. Սեփական հիմնական միջոցների գույքագրմանը զուգընթաց գույքագրվում են նաև ի պահ ընդունված և վարձակալված հիմնական միջոցները:

26. **Ոչ նյութական ակտիվների գույքագրում**

26.1. Ոչ նյութական ակտիվների գույքագրման ժամանակ ստուգվում է՝

ա) համայնքի կողմից դրանց օգտագործման իրավունքները հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ) հաշվապահական հաշվառման մեջ դրանց ճիշտ և ժամանակին արտացոլումը:

27. **Անավարտ շինարարության և հետագա ժամանակաշրջանի ծախսերի գույքագրում**

27.1. Անավարտ շինարարության գույքագրման ժամանակ անհրաժեշտ է՝

ա) ստուգել շինարարությունում գտնվող նախահաշվարկային փաստաթղթերի (դետալների, ագրեգատների, հանգույցների), ինչպես նաև պատրաստման և հավաքման առումով անավարտ շինարարության փաստացի առկայությունը,

բ) ստուգել անավարտ շինարարության (նախահաշվարկային փաստաթղթերի) փաստացի ավարտվածության (կոմպլեկտայնության) աստիճանը,

գ) բացահայտել չեղյալ հայտարարված, ինչպես նաև դադարեցված պատվերների գծով անավարտ շինարարության մնացորդները:

28. **Դրամական միջոցների, դրամական փաստաթղթերի և խիստ հաշվառման փաստաթղթերի գույքագրումը**

28.1. Դրամարկղի գույքագրման ժամանակ ստուգվում է դրամական միջոցների փաստացի առկայությունը: Ստուգվում են նաև խիստ հաշվառման փաստաթղթերը:

28.2. Դրամական միջոցների գույքագրման ակտում ցույց են տրվում գույքագրման օրվա դրությամբ փաստացի և ըստ հաշվառման տվյալների մնացորդները, որոնց հիման վրա որոշվում են գույքագրման արդյունքները:

28.3. Դրամական փաստաթղթերի առկայության ստուգման ժամանակ պարզում են դրանցից յուրաքանչյուրի իսկությունը և ձևակերպման ճշտությունը: Ստուգումն իրականացվում է ըստ փաստաթղթերի առանձին տեսակների՝ ակտում նշելով դրանց սերիան, համարները, քանակը և ընդհանուր գումարը:

29. **Գույքագրման հաշվետվությունների կազմումը**

29.1. Ակտիվների գույքագրման արդյունքների բացահայտման համար գույքագրման հանձնաժողովի կողմից կազմվում են համապատասխան հաշվետվություններ:

29.2. Հաշվետվություններում արտացոլվում են գույքագրման արդյունքները, այսինքն՝ նախորդ և ներկա գույքագրման ցուցակների տվյալների միջև տարբերությունները:

29.3. Գույքագրման արդյունքների ձևակերպման համար օգտագործվում են հողային հաշվեկշռի գրանցման միասնական գրանցամատյաններ, որտեղ միացված են գույքագրման ցուցակների և հաշվետվությունների ցուցանիշները:

30. Գույքագրման աշխատանքների ավարտից հետո համայնքային գույքի գույքագրման հանձնաժողովը կազմված հաշվետվությունը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնում է համայնքապետին, որին կցվում են նաև համայնքի հողերի հերթապահ քարտեզները, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի հողերի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին:

31. Գույքագրման աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կարող է քննարկվել նաև համայնքապետարանի աշխատակազմում, գույքի կառավարումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

32. Համայնքի կողմից սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու կամ օտարելու դեպքում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում և ընթացիկ քարտեզում /այդ թվում և հաշվեկշռում/ կատարում է համապատասխան փոփոխություններ և դրանց փոփոխման վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է քննարկման համայնքի ավագանու առաջիկա նիստում:

IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

33. Համայնքային գույքի ճիշտ, պլանավորված և արդյունավետ կառավարման համար պարտադիր իրականացվում է գույքի նկատմամբ համայնքի իրավունքների ժամանակին և համակարգված ձևակերպում և պետական գրանցում:

34. Համայնքային գույքի նկատմամբ իրավունքների ձևակերպման և գրանցման նպատակներն են՝

1) պարզել համայնքի վարչական տարածքում առկա անշարժ և շարժական գույքի նկատմամբ համայնքի իրավունքների առկայությունը, բնույթը, տեսակը և շրջանակը,

2) ճշտել համայնքի գույքի կազմը (հաշվեկշիռը),

3) ստեղծել և վարել համայնքային գույքի բազաները, գրանցամատյանները,

4) ճիշտ և համակարգված իրականացնել գույքագրման գործընթացները, այդ թվում՝ լրիվությամբ և ճշգրտորեն սահմանելով պարտադիր գույքագրման փաստաթղթերը,

5) գույքային ճշգրիտ բազաների հիման վրա կազմել համայնքային գույքի կառավարման ամենամյա և հնգամյա արդյունքահեն ծրագրեր,

6) օրինական և ճշգրիտ իրականացնել համայնքային հողամասերի, շենք-շինությունների, տարածքների, տրանսպորտային միջոցների, տեխնիկայի տնօրինման գործընթացները,

7) համակարգված և արդյունավետ իրականացնել համայնքային գույքի կառավարման նկատմամբ հսկողությունը,

8) կանխել, կանխարգելել համայնքային սեփականության գույքի կորուստն ու վատնումը:

35. Համայնքի իրավունքների ձևակերպում և գրանցում իրականացվում է՝

1) համայնքային հողամասերի նկատմամբ,

2) համայնքային հիմնարկների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ շենքերի և շինությունների նկատմամբ,

3) համայնքի տնտեսական զարգացման նպատակների համար անհրաժեշտ շենքերի և շինությունների նկատմամբ,

4) համայնքին փոխանցված պետական բնակարանային ֆոնդի չսեփականաշնորհված բնակարանների, հանրակացարանների, բնակելի և ոչ բնակելի այլ տարածքների, բացվածքների նկատմամբ,

5) համայնքի տարածքում առկա պատմամշակութային հուշարձանների նկատմամբ,

6) մարզադաշտերի, խաղահրապարակների, հանգստի գոտիներ նկատմամբ,

8) կանգառների, ավտոկայանների, ավտոկայանատեղերի նկատմամբ,

9) շուկաների, տոնավաճառների (վերնիսաժների), ցուցահանդեսների նկատմամբ,

10) բժշկական օգնության և սպասարկման (ամբուլատորիաներ) համար նախատեսված շենքերի նկատմամբ,

11) կամուրջների, գետնանցումների և այլ նմանատիպ կառույցների նկատմամբ,

12) աղբավայրերի, գերեզմանատների նկատմամբ,

13) գազամատակարարման, էլեկտրամատակարարման ներհամայնքային ցանցերի, ոռոգման ջրատարների, կոյուղու և ջեռուցման համակարգերի նկատմամբ,

14) համայնքային հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինությունների նկատմամբ,

15) տրանսպորտային միջոցների, տեխնիկայի նկատմամբ,

16) այլ անշարժ և շարժական գույքի նկատմամբ:

36. Համայնքապետարանի աշխատակազմում համայնքի գույքի կառավարման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները (քաղաքաշինության և հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնը, ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնը), նախորդ տարվա համայնքի գույքի կառավարման ծրագրերի կատարման հաշվետվություններն ամփոփելուց հետո, կազմում և մինչև հաջորդ տարվա համայնքի բյուջեի նախագծի կազմումը համայնքի ղեկավարին է ներկայացնում այն

գույքերի ցանկը, որոնց նկատմամբ համայնքի իրավունքները ենթակա են ձևակերպման և պետական գրանցման հաջորդ տարվա ընթացքում: Համայնքային հողամասերի ցանկը կազմելիս գույքագրում կատարող պետական լիազոր մարմինը պատասխանատու է և համագործակցում է աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման հետ:

37. Համայնքի ղեկավարը ցանկը քննարկում է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության, ֆինանսատնտեսագիտական, համայնքային գույքի կառավարման ոլորտների մասնագետների, համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների, վարչական շրջանների ղեկավարների, համայնքապետարանում համայնքի ղեկավարի կողմից ստեղծված՝ գույքի կառավարման բնագավառը համակարգող հանձնաժողովի անդամների հետ: Քննարկման արդյունքում հստակեցվում է հաջորդ բյուջետային տարվա ընթացքում իրավունքների ձևակերպման և պետական գրանցման ենթակա անշարժ և շարժական գույքի ցանկը, որը հաստատվում է համայնքի ղեկավարի կողմից:

38. Համայնքի ղեկավարը հանձնարարում է ֆինանսատնտեսագիտական գործառույթներ իրականացնող ստորաբաժանմանը, ցանկ-ժամանակացույցին համապատասխան, համայնքի հաջորդ տարվա բյուջեի նախագծում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ իրավունքների ձևակերպման և պետական գրանցման ենթակա անշարժ և շարժական գույքի չափագրման, ինչպես նաև՝ դրանց նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացման համար:

39. Համայնքի ղեկավարը հանձնարարում է աշխատակազմի համայնքային գույքի կառավարման ոլորտի պատասխանատուներին, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագծում ընդգրկել հաջորդ տարվա ընթացքում օտարման ենթակա հիմնական միջոցների ցանկը, իրավունքների ձևակերպման և պետական գրանցման ենթակա անշարժ և շարժական գույքի ցանկը:

40. Անհրաժեշտության դեպքում, համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված՝ իրավունքների ձևակերպման և պետական գրանցման ենթակա անշարժ և շարժական գույքի

ցանկում, ծրագրի իրականացման տարվա ընթացքում կարող են կատարվել փոփոխություններ:

41. Համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրերը հաստատվելուց հետո աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի պատասխանատուն կազմում և համայնքապետարանի գնումների գործառույթներ իրականացնող պատասխանատուին է ներկայացնում ծրագրում ընդգրկված հողամասերի և շենք-շինությունների չափագրական աշխատանքների տեխնիկական բնութագիրը՝ քանակական, թվային, ծավալային, որակական, ժամկետային և այլ բնութագրիչներով համայնքի կարիքների համար գնման գործընթաց իրականացնելու համար:

42. Հողամասերի ու շենք-շինությունների չափագրման համար անհրաժեշտ գործողությունները աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի հսկողությամբ կատարում է լիցենզավորված չափագրող կազմակերպությունը, որը հաղթել է մրցույթում՝ համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված ցանկին համապատասխան, ծրագրի իրականացման տարվա ընթացքում:

43. Չափագրական աշխատանքներն իրականացվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից:

44. Աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի պատասխանատուն, համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված ցանկին և ժամկետներին համապատասխան, չափագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպությանը պատվիրում է կատարել համապատասխան չափագրումները՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն չափագրվող անշարժ գույքի գտնվելու վայրի, հասցեի, շինությունները տիրապետող անձանց կոնտակտային տվյալների մասին:

45. Աշխատակազմի համայնքային գույքի կառավարման ոլորտի գործառույթներ իրականացնող պատասխանատուն (կամ այլ համայնքային պաշտոնյա) համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված ցանկին համապատասխան, ծրագրի իրականացման տարվա ընթացքում կազմակերպում և իրականացնում է տրանսպորտային միջոցների և

տեխնիկայի նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ գործողություններ:

46. Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի նկատմամբ համայնքի իրավունքների ծագումը հավաստող և անհրաժեշտ այլ փաստաթղթերի փաթեթը համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված համայնքապետարանի աշխատակիցը, ներկայացնում է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Ճանապարհային ոստիկանության հաշվառման և քննական տարածքային ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

47. Շենք-շինությունների և հողամասերի՝ Կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի հատակագծերը պատրաստ լինելուց հետո, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման կողմից նախապատրաստվում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծ՝ շենք-շինությունների և հողամասերի հատակագծերը հաստատելու և հասցեներ տրամադրելու մասին:

48. Որոշումն ընդունելուց հետո 5-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը՝ դիմումի հետ միասին, պետական գրանցում իրականացնող մարմնի՝ գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում է ներկայացնում որոշումը, կից հատակագծերով՝ օրենքով սահմանված կարգով իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

49. Իրավունքների պետական գրանցման վկայականները ստանալուց հետո, համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը, այն հանձնում է համայնքային գույքի հաշվառում իրականացնող աշխատակցին, ով անմիջապես վկայականները գրանցում է համապատասխան գրանցամատյաններում (գույքի բազաներում): Գրանցում իրականացնելուց հետո, վկայականների պատճենները հանձնվում են աշխատակազմի համապատասխան գործառույթներով օժտված պատասխանատուներին՝ այդ գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման համար համայնքի գույքի կառավարման ծրագրերով նախատեսված՝ անհրաժեշտ հետագա գործողությունների իրականացման համար:

V. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆԵՐԻ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ) ՎԱՐՈՒՄԸ

50. Համայնքային գույքի լավագույն և առավել արդյունավետ կառավարման քաղաքականության մշակման և իրագործման համար կարևոր նշանակություն ունի համայնքային գույքի գրանցամատյանների և տվյալների բազաների վարումը:

51. Համայնքային գույքի գրանցամատյանների և տվյալների բազաների վարման համար իրավական հիմքեր են հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 18-րդ կետը, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջները ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

52. Համայնքապետարանի աշխատակազմում վարվում են գույքի կառավարման վերաբերյալ հետևյալ գրանցամատյանները և տվյալների բազաները (այսուհետ՝ տվյալների բազաներ)՝

1) հողամասերի

2) շենք-շինությունների

3) մեքենա-մեխանիզմների:

53. Տվյալների բազաները վարվում են էլեկտրոնային եղանակով, այդպիսի հնարավորություն չլինելու դեպքում՝ բազաները վարվում են թղթային տարբերակով:

54. Տվյալների բազաների վարման սկզբունքներն են՝

1) համակարգվածությունը,

2) ամբողջականությունը,

3) միասնականությունը,

4) անընդհատությունը,

5) գրանցումների կատարման արագությունը,

6) գրանցումների կատարման ժամանակագրականությունը:

55. Տվյալների բազաների վարման նպատակներն են՝

1) համայնքի պարտադիր խնդիրների լուծման և տնտեսական գործունեության համար անհրաժեշտ հիմնական գույքի ամբողջական կազմը ունենալը,

2) համայնքային գույքի կառավարման արդյունավետ ծրագրեր կազմելը,

3) հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, գրանցամատյանների տվյալների ճշգրիտությունն ապահովելը,

4) համայնքային գույքի գույքագրման գործընթացների համար գույքի ելակետային տվյալներն ապահովելը,

5) ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմման արժանահավատությունն ապահովելը,

6) համայնքային գույքի շարժին հետևելը,

7) համայնքային գույքի տնօրինման գործընթացներն արագ և արդյունավետ կազմակերպելը,

8) համայնքի բնակիչներին գույքի մասին տեղեկատվություն տրամադրելը:

56. Տվյալների բազաները վարվում են համայնքապետարանի աշխատակազմում կիրառվող Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) «Համայնքային գույք» բաժնի միջոցով:

57. «Համայնքային գույք» բաժինը վարում է համայնքապետարանի աշխատակազմի գույքի կառավարման գործառույթներ իրականացնող պատասխանատու ստորաբաժանումը կամ այդպիսի գործառույթներով օժտված աշխատակիցը:

58. Սույն հավելվածի 36-րդ կետում նշված գույքի վերաբերյալ ցանկացած տնօրինման գործընթացների (օտարում, օգտագործման, կառուցապատման տրամադրում և այլն) ավարտից և իրավունքների ձևակերպումից հետո, համապատասխան փաստաթղթերի հիման վրա, տվյալների բազաներում անմիջապես կատարվում են համապատասխան գրառումները:

59. Տվյալների բազաներում փաստաթղթային հիմնավորում չունեցող ուղղումներ կատարել չի թույլատրվում:

60. ՀԿՏՀ «Համայնքային գույք» բաժինը կազմված է «Ընդհանուր տվյալներ», «Առաջարկներ», «Հողատարածքներ», «Շենք-շինություններ», «Մեքենա-մեխանիզմներ», «Պայմանագրեր», «Պարտքացուցակ», «Վճարումներ» ենթաբաժիններից:

61. «Ընդհանուր տվյալներ» ենթաբաժնում արտացոլվում են հողամասերի, շենք-շինություններիր, մեքենա-մեխանիզմների և կնքված (ընթացիկ) պայմանագրերի մասին քանակական և գրաֆիկական տվյալներ:

62. «Առաջարկներ» ենթաբաժնում արտացոլվում են համայնքի գույքի կառավարման ծրագրերում ընդգրկված գույքի կառավարման գործառույթների իրականացման առաջարկներ, որտեղ նշվում են գույքի տեսակը, գույքի տնօրինման առաջարկվող ձևը, գործընթացի իրականացման ժամանակահատվածը, այլ տվյալներ:

63. «Հողատարածքներ» ենթաբաժնում գրանցվում են հողամասի գտնվելու վայրը, հասցեն, բնակավայրը, կադաստրային համարը, կադաստրային արժեքը, մակերեսը

(քմ, հա), սեփականության ձևը (պետական, համայնքային, քաղաքացու, իրավաբանական անձի), տարածագնահատման գոտին, նպատակային նշանակությունը, գործառնական նշանակությունը, ոռոգվող է (այո, ոչ), գրանցման հիմքը, կարգավիճակը (տրված վարձակալության, օտարված, պարապուրդ, տրված կառուցապատման իրավունքով, տրված անհատույց օգտագործման իրավոինքով, տրված հավատարմագրային կառավարման, օգտագործման ենթակա, այլևս գոյություն չունեցող), տիրապետման ամսաթիվը, բնութագիրը (սոցիալական, եկամտաբեր, անհեռանկար, օտարման ենթակա):

64. «Շենք-շինություններ» ենթաբաժնում գրանցվում են շենք-շինություններ հասցեն, բնակավայրը, անվանումը, կադաստրային համարը, կադաստրային արժեքը, մակերեսը (քմ), սեփականության ձևը (պետական, համայնքային, քաղաքացու, իրավաբանական անձի), տարածագնահատման գոտին, նպատակային նշանակությունը, գործառնական նշանակությունը, գրանցման հիմքը, կարգավիճակը (տրված վարձակալության, օտարված, պարապուրդ, տրված կառուցապատման իրավունքով, տրված անհատույց օգտագործման իրավունքով, տրված հավատարմագրային կառավարման, օգտագործման ենթակա, այլևս գոյություն չունեցող), կառուցման ամսաթիվը, բնութագիրը (սոցիալական, եկամտաբեր, անհեռանկար, օտարման ենթակա):

65. «Մեքենա-մեխանիզմներ» ենթաբաժնում գրանցվում են մեքենա-մեխանիզմների վերաբերյալ տվյալները՝ տիպը, համարանիշը, մակնիշը, արտադրման տարեթիվը, սեփականության ձևը, կարգավիճակը, գրանցման հիմքը:

66. «Պայմանագրեր» ենթաբաժնում գրանցվում են պայմանագրի տեսակը, համարը, կողմը, գործողության ժամանակահատվածը, կարգավիճակը:

67. «Պարտքացուցակ» ենթաբաժնում արտացոլվում են պայմանագրերից գոյացած պարտքերը տվյալ ժամանակահատվածի պահով՝ գույքի տեսակը, հասցեն, պայմանագրի տեսակը, համարը, կարգավիճակը, մայր գումարի պարտքը, տույժի պարտքը:

68.«Վճարումներ» ենթաբաժնում արտացոլվում են կոնկրետ ժամանակահատվածում պայմանագրերից բխող կատարված վճարումները՝ գույքի տեսակը, հասցեն, պայմանագրի տեսակը, համարը, կարգավիճակը, վճարողը, վճարված գումարը, կտրոնի համարը, վճարման ամսաթիվը:

69. ՀԿՏՀ «Համայնքային գույք» բաժինը ունի գույքի կառավարման համար նախատեսված հարուստ գործիքակազմ, որը հնարավորություն է ընձեռնում էլեկտրոնային համակարգում կատարել գույքի վերաբերյալ մանրամասն ելակետային տվյալների գրանցումներ, հետագայում գրանցել գույքի հետ կատարված բոլոր փոփոխությունները, հետևել գույքի հետ կապված ֆինանսական գործառույթներին և այլն:

70. ՀԿՏՀ «Համայնքային գույք» բաժինը բնակիչների համար մատչելի և դյուրին գործիքներ է ապահովում գույքի կառավարման տվյալների բազաներից օգտվելու համար՝ ընձեռնելով որոնելու, ֆիլտրելու, արտահանելու, ներբեռնելու, տպելու և այլ հնարավորություններ: Տվյալների բազաների անվտանգությունը պահպանվում է համայնքապետարանի էլեկտրոնային կառավարման համակարգի անվտանգության կանոններով: Տվյալների բազաները արխիվացվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

VI. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

71. Համայնքային գույքի ճիշտ և արդյունավետ կառավարման գործընթացի կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում համայնքային գույքի գնահատման գործընթացը:

72. Համայնքային գույքի գնահատման գործընթացի իրականացման իրավական հիմքեր են հանդիսանում «Անշարժ գույքի գնահատման մասին» օրենքի 8-րդ հոդվածը, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

73. Գնահատման օբյեկտ կարող են հանդիսանալ համայնքի սեփականություն հանդիսացող՝

1) շենքերը,

2) բնակարանները,

3) հանրակացարանային սենյակները,

4) ոչ բնակելի տարածքները,

5) բացվածքները,

6) ստորգետնյա և վերգետնյա այլ շինությունները,

7) ընդերքի մասերը,

8) մեկուսի ջրային օբյեկտները,

9) անտառները,

10) բազմամյա տնկիները,

11) հողին ամրակցված այլ գույքը,

12) ինքնակամ շինությունները,

13) տիրազուրկ գույքը,

14) տրանսպորտային միջոցները,

15) գյուղատնտեսական և այլ տեխնիկան,

16) համայնքային այլ գույք:

74. Համայնքային գույքի գնահատում կատարվում է հետևյալ նպատակներով՝

1) օտարելու,

2) վարձակալության և օգտագործման տրամադրելու,

3) գրավադրելու,

4) հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը դրանց վերարտադրման գործող պայմաններին և իրական արժեքներին համապատասխանեցնելու,

5) ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու,

6) հաշվապահական հաշվառման փաստաթղթերում մուտքագրելու,

7) գույքի հետ կապված որոշումներ կայացնելիս անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու,

8) համայնքի տնտեսական գործունեության համար անհրաժեշտ այլ նպատակներով:

75. Անշարժ գույքի գնահատումը պարտադիր է՝

1) համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ համայնքային հողերի օտարման դեպքերի,

2) անշարժ գույքը համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում,

3) անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում:

76. Համայնքի անշարժ գույքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով՝ անշարժ գույքի գնահատման մասնագիտական որակավորում (վկայական) ունեցող անձի կողմից.

77. Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի գնահատումն իրականացվում է ապրանքագիտական մասնագիտություն և համապատասխան որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից կամ ՀՀ-ում գործող փորձագիտական կենտրոնների կողմից:

78. Համայնքային գույքի գնահատման աշխատանքներն իրականացվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից:

79. Համայնքային գույքի գնահատման գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատեր համարվող ֆիզիկական անձանց կողմից՝ գույքի գնահատման պատվերի հիման վրա՝ գնահատողի միջոցով:

80. Համայնքային գույքի գնահատման պատվերի իրավական հիմք է գույքի գնահատման սուբյեկտների միջև օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիրը:

81. Համայնքային գույքի գնահատման աշխատանքներն իրականացնելիս մասնագիտական որակավորում ունեցող գնահատողն անկախ է և գույքի գնահատումն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը և գնահատման ստանդարտին համապատասխան:

82. Համայնքային գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծություն ստանալու անհրաժեշտության դեպքում համայնքապետարանը կարող է գնման պայմանագրի շրջանակներում մասնագիտական որակավորում ունեցող գնահատողին պատվիրել նաև կատարել նման վերլուծություն:

83. Համայնքի գույքի կառավարման ամենամյա ծրագրին համապատասխան և սահմանված ժամկետներում համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման գործառույթներ իրականացնող պատասխանատուն իրականանացնում է գնահատման գործընթացի համար անհրաժեշտ գործողություններ այն գույքի վերաբերյալ, որոնց նկատմամբ իրականացվելու են ծրագրով նախատեսված տնօրինման գործընթացներ:

84. Գույքի գնահատման պատվերը պետք է ներառի տվյալներ գնման պայմանագրի, պատվիրատուի, կատարողի վերաբերյալ, գնահատվող գույքի ելակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրները, հաշվետվության ներկայացման ժամկետը:

85. Համայնքային գույքի կառավարման գործառույթներ իրականացնող պատասխանատուն գնահատման գործունեություն իրականացնող անձանց տրամադրում է գույքի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր և հավաստի տեղեկություններ՝ չխոչընդոտելով և չմիջամտելով գնահատման գործընթացին:

86. Գնահատման հաշվետվությունը տրամադրվում է համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման գործառույթներ իրականացնող պատասխանատուին: Վերջինս հաշվետվությունը ներառում է գույքի տնօրինման գործընթացների համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում:

87. Գույքի գնահատման հաշվետվությունը ներառում է տվյալներ գնահատման և տեղազննության ամսաթվի ու տարեթվի մասին, գնահատման օբյեկտի նկարագիրը, տեղազննության արդյունքները, գնահատման արդյունքում ստացված և ձևավորված գույքի արժեքի գնահաշվարկները և այլ տվյալներ:

88. Գույքի գնահատման հաշվետվությունը պետք է հաստատված լինի գնահատողի ստորագրությամբ կամ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ, որի հետ գնահատողը կնքել է աշխատանքային պայմանագիր, ինչպես նաև նշված լինի թերթերի քանակը: Հաշվետվության յուրաքանչյուր տպագրված և համարակալված թերթ պետք է ստորագրված լինի գնահատողի կողմից:

89. Գույքի գնահատման հաշվետվության գործողության ժամկետը վեց ամիս է:

VII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

90. Համայնքային գույքի կառավարման ծրագրերի կազմումը, քննարկումը և ընդունումը համակարգում է համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման ոլորտի պատասխանատուների միջոցով:

91. ***Համայնքային գույքի կառավարման ծրագրերն են՝***

1) համայնքային հողերի կառավարման ամենամյա ծրագրերը.

2) համայնքային շենքերի և շինությունների կառավարման ամենամյա ծրագրերը.

3) համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների և տեխնիկայի կառավարման ամենամյա ծրագրերը:

92. Համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերը հանդիսանում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:

93. Հաջորդ բյուջետային տարվա ընթացքում իրականացվող՝ սույն կարգի 92-րդ կետում նշված ծրագրերի նախագծերի կազմումը, ծրագրերի առանձին բաղադրիչների համար պատասխանատուների կողմից անհրաժեշտ գործողությունների կատարումը, քանակական, թվային, որակական և բովանդակային տվյալների հավաքագրումն ու ճշգրտումը, նախագծերի ընթացիկ քննարկումները սկսվում են յուրաքանչյուր տարվա փետրվար ամսից:

94. Ծրագրերի նախագծերը կազմելիս հաշվի են առնվում համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և նախորդ տարվա գույքի կառավարման ամենամյա ծրագրերի կատարման հաշվետվությունների արդյունքներն ու վերլուծությունները:

95. Մինչև համայնքի հաջորդ տարվա բյուջեի նախագծի կազմումը, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման ոլորտի պատասխանատու ստորաբաժանումները, համայնքի ղեկավարին է ներկայացնում գույքի կառավարման ծրագրերի նախագծերը:

96. Համայնքի ղեկավարը կազմակերպում է նախագծերի քննարկումներ համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ոլորտների պատասխանատուների, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների, ավագանու անդամների (մշտական հանձնաժողովների) հետ, ինչպես նաև նախաձեռնում է նախագծերի հանրային քննարկումներ:

97. Քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերում կատարվում են փոփոխություններ և լրացումներ, որից հետո դրանք ներկայացվում են համայնքի ավագանու նիստում քննարկման և հաստատման:

98. Համայնքային գույքի կառավարման հաստատված ծրագրերի հիման վրա համայնքի հաջորդ տարվա բյուջեի նախագծում ներառվում են ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան ծախսային միջոցներ, ինչպես նաև նախատեսվում են սպասվելիք եկամուտներ:

99. Անհրաժեշտության դեպքում համայնքի հնգամյա զարգացման ծրագրում կատարվում են լրացումներ և փոփոխություններ՝ համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերին համապատասխան:

100. Տվյալ բյուջետային տարվա ընթացքում համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերով նախատեսված ժամանակացույցերին համապատասխան կազմակերպվում և իրականացվում են գույքի կառավարման համար անհրաժեշտ գործընթացները:

VIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

101. Համայնքային գույքի կառավարումն արդյունավետ կազմակերպելու, գույքի շրջանառության արդյունքում համայնքի բյուջեի միջոցների ավելացում ապահովելու նպատակով համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերով կարող է օտարման առաջարկվել հետևյալ համայնքային գույքը՝

1) հողամասերը.

2) շենքերը, շինությունները.

3) բնակարանները, հանրակացարանային սենյակները.

4) տրանսպորտային միջոցները.

5) գյուղատնտեսական և այլ տեխնիկան:

102. Համայնքային գույքը օտարման կարող է ներկայացվել հետևյալ ձևերով՝

1) աճուրդով.

2) մրցույթով.

3) ուղղակի վաճառքով.

4) նվիրատվության ձևով .

5) նվիրաբերության ձևով.

6) փոխանակության միջոցով:

103. Գույքի օտարման մասին որոշումն ընդունում է համայնքի ավագանին:

104. Գույքի օտարման գործընթացների իրականացումը համակարգում է համայնքի ղեկավարը:

105. Գույքի օտարման ժամանակ ապահովվում է գործընթացների հրապարակայնությունը և թափանցիկությունը:

106. Համայնքային գույքի օտարումն աճուրդային (մրցույթային) կարգով իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից ստեղծված աճուրդային հանձնաժողովը:

107. Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

108. Գույքի օտարման ժամանակ ուղղակի վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների ժամանակ՝ մեկնարկային գինը որոշվում է հողամասերի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի)՝ կադաստրային արժեքի հիման վրա, իսկ շենք-շինությունների և տրանսպորտային միջոցների ու տեխնիկայի համար՝ համապատասխան որակավորում ունեցող անկախ

գնահատողի կողմից տրված գնահատման հաշվետվության հիման վրա՝ համայնքի ավագանու որոշմամբ:

109. Գույքը ուղղակի վաճառքով, նվիրատվության (նվիրաբերության) ձևով, փոխանակության միջոցով օտարման է ներկայացվում օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև հիմնավոր պատճառաբանության և համապատասխան եզրակացությունների առկայության դեպքում:

IX. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

110. Համայնքային գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման նպատակով կարող է համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերով օգտագործման տրամադրման առաջարկվել հետևյալ համայնքային գույքը՝

1) հողամասերը.

2) շենքերը, շինությունները.

3) բնակարանները, հանրակացարանային սենյակները.

4) տրանսպորտային միջոցները.

5) գյուղատնտեսական և այլ տեխնիկան:

111. Համայնքային գույքը կարող է տրամադրվել օգտագործման՝

1) անհատույց (մշտական կամ ժամանակավոր) օգտագործման իրավունքով.

2) վարձակալության իրավունքով.

3) կառուցապատման իրավունքով.

5) սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով.

6) կարճաժամկետ օգտագործման նպատակով:

112. Համայնքային գույքը օգտագործման կարող է ներկայացվել հետևյալ ձևերով՝

1) մրցույթով.

2) ուղղակի եղանակով:

113. Համայնքային գույքը օգտագործման է տրամադրվում ավագանու որոշմամբ՝ համայնքի ղեկավարի միջոցով:

114. Գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել սոցիալական, բարեգործական, համայնքի տնտեսական ակտիվության խթանման և համայնքի զարգացման ծրագրերով նախատեսված այլ նպատակներով:

115. Գույքն ուղղակի եղանակով օգտագործման է տրամադրվում օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև պատճառաբանված հիմնավորման առկայության դեպքում:

116. Գույքի օգտագործման տրամադրման մրցույթները կազմակերպվում են հրապարակայնության և թափանցիկության պայմանների ապահովմամբ՝ համայնքի ավագանու կողմից ստեղծված մրցույթային հանձնաժողովի միջոցով:

117. Գույքն ուղղակի եղանակով օգտագործման տրամադրման ժամանակ վարձավճարի կամ վճարի չափը, իսկ հրապարակային սակարկությունների ժամանակ՝ վարձավճարի կամ վճարի նվազագույն չափը որոշվում է հողամասերի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի)՝ կադաստրային արժեքի հիման վրա, իսկ շենք-շինությունների և տրանսպորտային միջոցների ու տեխնիկայի համար՝ համապատասխան որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից տրված գնահատման հաշվետվության հիման վրա՝ համայնքի ավագանու որոշմամբ:

118. Հողամասերի տարեկան վարձավճարի և կառուցապատման իրավունքի վճարի չափը չի կարող պակաս լինել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

119. Համայնքային գույքն օգտագործման տրամադրելու մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը:

X. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

120 Համայնքային գույքի կառավարման բնագավառի քաղաքականության կարևոր մաս է հանդիսանում համայնքի տրանսպորտային միջոցների և տեխնիկայի (այսուհետ՝ Շարժական Գույք) տնօրինումը և Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրերի կազմումը:

121. Շարժական Գույքի կառավարման ոլորտում համայնքի ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականության սկզբունքներն են.

1) համայնքի ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ Շարժական Գույքով առաջնահերթությամբ ապահովումը,

2) շարժական Գույքի կառավարման արդյունավետության շարունակական ապահովումը,

3) համայնքում մատուցվող համայնքային որակյալ հանրային ծառայությունների մատչելիության ապահովումը,

4) շարժական Գույքի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

122. Շարժական Գույքի կառավարման ոլորտում համայնքի ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականության նպատակներն են.

1) շարժական Գույքի արդյունավետ և նպատակային նշանակությամբ օգտագործումը,

2) իրավական ակտերով սահմանված՝ Շարժական Գույքի պահպանման և օգտագործման պիտանելիության ժամկետների, նորմատիվների և կանոնների պահպանումը,

3) շարժական Գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումը

4) բյուջետային քաղաքականության համապատասխան ուղղություններով սահմանված խնդիրների լուծումը:

123. Շարժական Գույքի տնօրինման գործընթացն իրականացվում է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից:

124. Շարժական Գույքի կառավարման ոլորտում համայնքի ՏԻՄ-երի կողմից քաղաքականության իրականացման համար համայնքի ղեկավարը կազմում է Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրերը:

125. Համայնքի ղեկավարը Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրերը կազմում է գույքի կառավարման ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների (այդպիսիք չլինելու դեպքում՝ համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան գործառույթներով օժտված աշխատակցի) կամ համայնքի ղեկավարի կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով: Վերջիններս յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում Շարժական Գույքի կառավարման հաջորդ տարվա տարեկան ծրագրի նախագիծը:

126. Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրերի նախագծերի կազմման և իրականացման հիմքում դրվում են Շարժական Գույքի տնօրինման և կառավարման հետևյալ խնդիրները՝

1) շարժական Գույքի կառավարման, պահպանման, օտարման և օգտագործման միասնական համակարգի ձևավորումը.

2) շարժական Գույքի ամբողջական գույքագրումը և հաշվառումը, Շարժական Գույքի տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

3) շարժական Գույքի յուրաքանչյուր միավորի ծրագրային կառավարման նպատակի սահմանումը և ամրագրումը, տարվա ընթացքում այդ գույքի վերանորոգման, արդիականացման և այլ անհրաժեշտ կանխատեսվող ծախսերը, ինչպես նաև այդ գույքի օգտագործումից սպասվելիք եկամուտները.

4) շարժական Գույքի օտարումից, ինչպես նաև վարձակալության տրամադրելուց ստացված միջոցների հաշվին համայնքի և(կամ) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բյուջեներում եկամուտների ապահովումն ու ավելացումը.

5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող Շարժական Գույքի յուրաքանչյուր միավորի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվության տրամադրումը այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են համայնքի բնակչության կարիքների բավարարմանը և համայնքի տնտեսական աճի ապահովմանը.

6) համայնքի բնակչությանը նոր ծառայություններ մատուցելու նպատակով շարժական Գույքի օգտագործման արդյունքում ստացված շահույթից Շարժական Գույքի նոր միավորների ձեռքբերումը.

7) շարժական Գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցման աշխատանքների կազմակերպումը, Շարժական Գույքի օտարման (այդ թվում՝ խոտանման) դեպքերում համայնքի սեփականության իրավունքների դադարեցումը:

127. Շարժական Գույքը օտարվում է՝

1) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.

2) ուղղակի վաճառքի միջոցով.

3) աճուրդով.

4) փոխանակության միջոցով.

5) խոտանման միջոցով:

128. Շարժական Գույքը կարող է օտարվել (այդ թվում՝ անհատույց) միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

129. Շարժական Գույքի օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝

1) Շարժական Գույքի օտարման եղանակի, ժամկետների, նպատակի, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գնի, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին.

2) Շարժական Գույքն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող Շարժական Գույքի վաճառքի գնի և վճարման ժամկետների մասին:

130. Շարժական Գույքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից Շարժական Գույքի գնահատված արժեքի 100 տոկոսից:

131 Շարժական Գույքն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում ավագանու նոր որոշումը ներառում է տեղեկություններ՝ հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) Շարժական Գույքի չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին, որը պետք է լինի վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 10 տոկոսի չափով:

132. Խոտանման միջոցով Շարժական Գույքի օտարումը իրականացվում է միայն Շարժական Գույքի օգտագործման պիտանելության ժամկետը ավարտվելուց հետո և(կամ) այլ պատճառով օգտագործման անհնարինության դեպքերում՝ որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից տրված եզրակացության հիման վրա:

133. Շարժական Գույքի սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու և փոխանակության միջոցով Շարժական Գույքի օտարման իրականացման ժամանակ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու և փոխանակության նպատակը և հիմնավորումը:

134. Շարժական Գույքն օգտագործման է տրամադրվում ՝

1) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.

2) վարձակալությամբ:

135. Շարժական Գույքը կարող է օգտագործվել՝ վարձակալության, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրվել միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

136. Շարժական Գույքը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ օգտագործման տրամադրման եղանակի, ժամկետի, նպատակի մասին:

137. Շարժական Գույքը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրվում է միայն համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին:

138. Շարժական Գույքը օգտագործման՝ վարձակալության տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի չափի մասին:

139. Վարձակալության տրամադրվող Շարժական Գույքի վարձակալական վճարների մեծությունը որոշվում է շուկայական գնահատմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի կողմից՝ համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթների շրջանակներում և որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից:

140. Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է շարժական գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագծի աշխատանքային քննարկումներ՝ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, համայնքային գույքի կառավարման ստորաբաժանումների մասնագետների, համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների, բնակավայրերի վարչական ղեկավարների, շարժական գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագծի կազմման գործընթացը համակարգող հանձնաժողովի անդամների և համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության հարցերի խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, համայնքում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին և խմբերին:

141. Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովները անցկացնում են նախնական քննարկումներ և, մինչև ավագանու նիստին նախորդող յոթերորդ օրը, Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագծի վերաբերյալ իրենց եզրակացությունները գրավոր ներկայացնում են համայնքի ղեկավարին:

142. Անցկացված քննարկումների արդյունքներով, ԽՄ-ն և համայնքի աշխատակազմը լրամշակում են Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագիծը, պատրաստում են դրա վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթերը և տեղեկանքները) և ներկայացնում համայնքի ղեկավարին:

143. Համայնքի ղեկավարը լրամշակված Շարժական Գույքի կառավարման տարեկան ծրագրի նախագիծը և դրան կից փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, համայնքի հաջորդող տարվա բյուջեի հաստատման նախագծի հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

XI. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

144. Համայնքային գույքի կառավարման բնագավառի քաղաքականության կարևոր և բաղադրիչ մաս է կազմում համայնքի վարչական տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում (այսուհետ՝ համայնքային հողամասեր) գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման քաղաքականությունը:

145. Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման գործընթացի իրականացման իրավական հիմքեր են հանդիսանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 18.05.2006թ-ի N 912-Ն և N 731-Ն որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

146. Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման ոլորտում համայնքի ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականության սկզբունքներն են.

1) օրինականության ապահովումը,

2) սկզբունքայնությունը,

3) շարունակականությունը,

4) պատասխանատվության կիրառումը,

5) հետևողականությունը:

147. Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման ոլորտում համայնքի ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականության նպատակներն են.

1) համայնքի տարածքում ինքնակամ շինարարությունների կանխարգելումը,

2) քաղաքաշինական նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացումը,

3) կառուցապատողների կողմից քաղաքաշինության ոլորտի օրենսդրության նորմերի պահպանման մշակույթի ձևավորումը,

4) համայնքի հողաշինարարական, քաղաքաշինական և բյուջետային քաղաքականության համապատասխան ուղղություններով սահմանված խնդիրների լուծումը:

148. Համայնքային հողամասերի վրա առկա ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման գործընթացն իրականացվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ:

149. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի կողմից ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման գործընթացը համակարգվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 912-Ն ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին որոշման հիման վրա:

150. Համայնքային հողամասերի վրա առկա ինքնակամ շինությունները ենթակա են հաշվառման համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների վերահսկողությամբ այդ գործառույթներն իրականացնելու համար լիցենզավորված մարմնի կողմից: Վերջիններս յուրաքանչյուր տարվա հունվար ամսին կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում համայնքի վարչական տարածքում առկա ինքնակամ շինությունները հայտնաբերելու և հաշվառելու, ինչպես նաև՝ կանխարգելիչ մշտադիտարկում իրականացնելու, տվյալ տարվա աշխատանքային ծրագիր-ժամանակացույցը:

151. Հաշվառումն ու մշտադիտարկումն իրականացվում է տվյալ տարվա ընթացքում՝ ծրագրի ժամանակացույցին համապատասխան:

152. Համայնքի տարածքում հայտնաբերված ինքնակամ շինությունների տվյալները հաշվառվում են գրանցամատյանում:

153. Հաշվառումն իրականացվում է մինչև հաջորդ տարվա համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմումը: Հաշվառման արդյունքներով կազմվում է զեկույց, որը ներկայացվում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը զեկույցը քննարկում

է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության, ֆինանսատնտեսագիտական, համայնքային գույքի կառավարման ոլորտների մասնագետների, համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների, վարչական ղեկավարների: Քննարկման արդյունքում հստակեցվում է հաջորդ բյուջետային տարվա ընթացքում օրինականացման և տնօրինման ենթակա՝ համայնքի վարչական տարածքում առկա համայնքային հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինությունների ցանկ-ժամանակացույցը, որը հաստատվում է համայնքի ղեկավարի կողմից:

154. Անհրաժեշտության դեպքում ցանկ-ժամանակացույցի մեջ համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների կառավարման տարեկան ծրագրի իրականացման տարվա ընթացքում կարող են կատարվել փոփոխություններ:

155. Համայնքի ղեկավարը հանձնարարում է ֆինանսատնտեսագիտական գործառույթներ իրականացնող ստորաբաժանմանը (համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան գործառույթներով օժտված աշխատակցին), ինքնակամ շինությունների ցանկ-ժամանակացույցին համապատասխան, համայնքի հաջորդ տարվա բյուջեի նախագծում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ ինքնակամ շինությունների և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի չափագրման, ինչպես նաև՝ դրանց նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացման համար:

156. Համայնքի ղեկավարը հանձնարարում է համայնքային գույքի կառավարման ոլորտի գործառույթներ իրականացնող ստորաբաժանմանը (համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան գործառույթներով օժտված աշխատակցին), ինքնակամ շինությունների ցանկ-ժամանակացույցին համապատասխան, կազմել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվող՝ համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների կառավարման տարեկան ծրագրի նախագծում ընդգրկել, հաջորդ տարվա ընթացքում օրինականացման և տնօրինման ենթակա ինքնակամ շինությունների ցանկը:

157. Անհրաժեշտության դեպքում, համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված ինքնակամ շինությունների ցանկում ծրագրի իրականացման տարվա ընթացքում կարող են կատարվել փոփոխություններ:

158. Համայնքի ղեկավարը հանձնարարում է աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանմանը (աշխատակազմի համապատասխան գործառույթներով օժտված աշխատակցին), համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների կառավարման տարեկան ծրագրում ընդգրկված ցանկին համապատասխան, ծրագրի իրականացման տարվա ընթացքում կազմակերպել և իրականացնել ինքնակամ շինությունների և դրանց զբաղեցրած հողամասերի չափագրման, օրինականացման, իսկ օրինականացման անհնարինության դեպքում՝ քանդման, համար անհրաժեշտ գործողություններ:

159. Չափագրական աշխատանքներն իրականացվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով ընտրված, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից:

160. Ինքնակամ կառույցների և դրանց զբաղեցրած հողամասերի՝ Կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի հատակագծերը պատրաստ լինելուց հետո, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման կողմից նախապատրաստվում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծ՝ ինքնակամ կառույցը համայնքի (պետության) սեփականություն համարելու, հողամասի ու շինությունների հատակագծերը հաստատելու և հասցե տրամադրելու մասին, ինչպես նաև Կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշման 36-րդ կետի հիման վրա:

161. Որոշումն ընդունելուց հետո 5-օրյա ժամկետում, համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը՝ դիմումի հետ միասին, պետական գրանցում իրականացնող մարմնի՝ գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում է ներկայացնում որոշումը, կից հատակագծերով՝ օրենքով սահմանված կարգով իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

162. Իրավունքների պետական գրանցման վկայականը ստանալուց հետո, համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը, այն հանձնում է համայնքային գույքի հաշվառում իրականացնող աշխատակցին, ով անմիջապես վկայականը գրանցում է համապատասխան գրանցամատյաններում (գույքի բազաներում):

163. Համայնքի ղեկավարի կողմից վարչական վարույթը հարուցվելուց հետո, 15 աշխատանքային օրվա ընթացքում, իրականացվում է վարչական վարույթի

նյութերի, հանգամանքների և փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրություն, որի շրջանակում պարզման ենթակա հարցերն են.

1) հողամասի գտնվելու վայրը (հասցեն),

2) հողամասի մակերեսը,

3) հողամասի նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման անհրաժեշտության առկայությունը կամ բացակայությունը,

4) կառույցի մակերեսը, գործառական նշանակությունը,

5) հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված պայմաններին կառույցի անհամապատասխանության առկայությունը կամ բացակայությունը,

6) կառույցի պահպանման դեպքում այլ անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտման առկայությունը կամ բացակայությունը,

7) կառույցի պահպանման դեպքում քաղաքացիների կյանքին ու առողջությանը սպառնալիքի վտանգի առկայությունը կամ բացակայությունը,

8) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա կառուցված լինելու հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը,

9) կառույցը ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կառուցված լինելու առկայությունը կամ բացակայությունը,

10) կառույցը քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված լինելու առկայությունը կամ բացակայությունը,

11) կառույցի պահպանման դեպքում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք առաջացնելու առկայությունը կամ բացակայությունը,

12) կառույցն իրականացրած անձի վերաբերյալ տվյալներ (կոնտակտային տվյալներ, կառույցը տվյալ անձի կողմից կառուցված լինելու փաստը հիմնավորող ապացույցներ):

164. Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե առկա են սույն կարգի 176-րդ կետի 5-11-րդ ենթակետերում նշված պայմանները:

165. Ինքնակամ կառույցը չօրինականացվելու դեպքում վարչական վարույթի իրականացման պատասխանատուն կազմում և համայնքի ղեկավարի

հաստատմանն է ներկայացնում ինքնակամ կառույցը քանդելու մասին որոշման նախագիծը՝ օրինականացումը մերժելու հիմնավորումներով:

166. Կառույցը քանդելու մասին որոշման ընդունումից հետո 5-օրյա ժամկետում կառույցն իրականացրած անձին գրավոր տեղյակ է պահվում կառույցի չօրինականացման պատճառների մասին՝ իրավական ակտի կոնկրետ նորմի պարտադիր նշումներով, առձեռն հանձնելու կամ փոստով առաքելու միջոցով:

167. Գրավոր տեղեկացման մեջ առաջարկվում է կառույցն իրականացրած անձին՝ իր միջոցներով քանդել ինքնակամ կառույցը և համայնքային հողամասը բերել նախկին տեսքի՝ տալով ողջամիտ ժամկետ: Տրված ժամկետում կառույցը չքանդելու դեպքում, համայնքի ղեկավարը նախաձեռնում է համայնքի միջոցներով ինքնակամ կառույցը քանդելու գործընթաց, որի համար համայնքին տրվում է քանդման թույլտվություն: Կառույցը քանդելու աշխատանքները համայնքը պատվիրում է համապատասխան որակավորում ունեցող կազմակերպությանը՝ «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով կնքված աշխատանքների գնման պայմանագրի հիման վրա:

168. Ինքնակամ կառույցի քանդման գործընթացն ավարտելուց հետո համայնքի ղեկավարը (կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը) դիմում է իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնի՝ գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում՝ ներկայացնելով քանդման թույլտվությունը, տարածքի լուսանկարները և քանդման ավարտման ակտը՝ օրենքով սահմանված կարգով ինքնակամ կառույցի նկատմամբ համայնքի գրանցված իրավունքների դադարեցման պետական գրանցում կատարելու համար:

169. Համայնքի ղեկավարը իրավունք ունի համայնքային հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձից պահանջելու հատուցել համայնքին հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

170. Արգելվում է ինքնակամ կառույցների օրինականացման մերժումը աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

171. Եթե առկա չեն սույն կարգի 176-րդ կետի 5-11-րդ ենթակետերում նշված պայմանները, ապա վարչական վարույթի իրականացման պատասխանատուն, նույն կետում նշված ժամկետում, կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին որոշման նախագիծը:

172. Ինքնակամ կառույցների օրինականացման դեպքում՝ ըստ անհրաժեշտության, հողամասերի գործառնական նշանակությունը համարվում է փոփոխված:

173. Օրինականացման մասին որոշումը կայացնելուց հետո անմիջապես համայնքի ղեկավարը կառույցն իրականացրած անձին պատշաճ կարգով գրավոր առաջարկություն է ներկայացնում օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), ՀՀ կառավարության 18.05.2006թ-ի N 912-Ն որոշմամբ սահմանված գներով, ձեռք բերելու մասին՝ առաջարկության ընդունման համար համար նախատեսելով 15 աշխատանքային օր:

174. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սահմանված ժամկետում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացվում է գրավոր առաջարկություն կառույցը վարձակալելու վերաբերյալ՝ առաջարկության ընդունման համար նախատեսելով 5 աշխատանքային օր:

175. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

176. Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ հողամասի արժեքը հաշվարկվում է դրա՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքով:

177. Վարձակալության իրավունքով գույքը տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է վարձավճարի՝ համայնքի ավագանու կողմից սահմանված նվազագույն չափը:

178. Համայնքային հողամասերում կառուցված ավտոտնակների, կրպակների, տաղավարների և այլ համանման ինքնակամ շինությունների օրինականացման ու տնօրինման դեպքերում, եթե ինքնակամ շինությունների և համապատասխան

հողամասի՝ սեփականության իրավունքով տրամադրումը հակասում է համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական գոտևորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ապա սույն կետում նշված ինքնակամ կառույցները և համապատասխան հողամասը տրամադրվում է վարձակալության իրավունքով:

179. Սույն կարգի 186-րդ կետում նշված առաջարկն ընդունվելու դեպքում վարույթի իրականացման պատասխանատուն կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում համայնքի սեփականություն համարվող, օրինական ճանաչված ինքնակամ կառույցն ուղղակի վաճառքով կառույցն իրականացրած անձին օտարելու մասին որոշման նախագիծ:

180. Որոշումը համայնքի ղեկավարի կողմից ընդունվելուց հետո, այն պատշաճ ձևով տրամադրվում է կառույցն իրականացրած անձին, վերջինիս կողմից որոշման մեջ նշված համայնքի բյուջե վճարվող համապատասխան գումարների վճարման անդորրագրերը ներկայացնելուց հետո:

181. Համայնքային հողամասերի վրա կառուցված օրինական ճանաչված ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքի դեպքում համայնքի բյուջե վճարման են ենթակա.

1) կառույցի՝ ՀՀ կառավարության 18.05.2006թ-ի N 912-Ն որոշմամբ սահմանված գներով հաշվարկված գինը.

2) հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքով հաշվարկված գինը.

3) համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճարը.

4) հասցեի տրամադրման ծառայության վճարը:

182. Համապատասխան վճարումները կատարելուց և ուղղակի վաճառքի մասին որոշումը ստանալուց հետո, կառույցն իրականացրած անձի և համայնքի ղեկավարի միջև նոտարական կարգով կնքվում է առուծախի պայմանագիր, որի մեկ օրինակը համայնքի ղեկավարը, կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի աշխատակիցը, հանձնում է համայնքային գույքի հաշվառում իրականացնող աշխատակցին, ով անմիջապես գրանցում է կատարում համապատասխան գրանցամատյաններում (գույքի բազաներում)՝ համայնքի սեփականություն համարվող ինքնակամ կառույցն օտարված լինելու մասին:

XII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

183. Համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողությունը հանդիսանում է համայնքային գույքի կառավարման բնագավառի արդյունավետ քաղաքականության վարման կարևոր բաղադրիչներից մեկը:

184. Համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավական հիմքերն են հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 48-րդ, 48.1-րդ, 54-րդ, 152.2-րդ հոդվածները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

185. Համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողության ոլորտում համայնքի քաղաքականության վարման սկզբունքներն են.

1) անընդհատությունը,

2)պարբերականությունը,

3) պլանավորվածությունը,

4) ընտրանքային ուսումնասիրությունների անցկացումը,

5) հաշվետվողականությունը,

6) պատասխանատվության անխուսափելիությունը:

186. Համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողության ոլորտում համայնքի կողմից վարվող քաղաքականության նպատակներն են.

1) համայնքային գույքի պահպանվածության ապահովումը,

2) համայնքային գույքի օգտագործման և շրջանառության նկատմամբ մշտադիտարկումը,

3) համայնքային գույքի նպատակային օգտագործման ապահովումը,

4) համայնքային գույքի կորստի և փչացման կանխարգելումը,

5) համայնքային գույքի օտարման և օգտագործման տրամադրման գործընթացների օրինականության և թափանցիկության ապահովումը,

6) համայնքային գույքի կառավարման բնագավառում խախտումների ժամանակին հայտնաբերումը և դրանց հետևանքների վերացման ապահովումը,

7) համայնքային գույքի նկատմամբ սրտացավ վերաբերմունքի մշակույթի

ձևավորումը,

8) համայնքային հողամասերի, շենք-շինությունների զավթումը և ապօրինի զբաղեցումը կանխարգելելը:

187. Համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողության գործառույթներն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման գործառույթներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը, դրա բացակայության դեպքում՝ համապատասխան գործառույթներով օժտված համայնքապետարանի աշխատակիցը (այսուհետ՝ համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատու):

188. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուները ընդգրկվում են համայնքային գույքի օտարման և օգտագործման տրամադրման համար աճուրդներ և մրցույթներ անցկացնող հանձնաժողովներում, ինչպես նաև՝ համայնքային գույքի ամենամյա գույքագրման հանձնաժողովներում:

189. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուները մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում համայնքային գույքի կառավարման նկատմամբ վերահսկողության նպատակով իրականացվող միջոցառումների՝ տվյալ տարվա աշխատանքային ծրագիր-ժամանակացույցը:

190. Ծրագիր-ժամանակացույցում ընդգրկվում են.

1) Համայնքի սեփականություն հանդիսացող շենք-շինությունների պահպանվածության վիճակի, դրանց նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

2) Վարձակալության կամ օգտագործման տրամադրված համայնքային շենք-շինությունների, տարածքների պահպանվածության վիճակի, դրանց նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

3) Համայնքային հողամասերի պահպանվածության և վիճակի նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

4) Համայնքային հողամասերի նպատակային նշանակությամբ օգտագործման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

5) Համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանության նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

6) Համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների և տեխնիկայի պահպանվածության վիճակի, դրանց նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

7) Վարձակալության կամ օգտագործման տրամադրված համայնքային տրանսպորտային միջոցների և տեխնիկայի պահպանվածության վիճակի, դրանց նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

8) Վարձակալության կամ օգտագործման տրամադրված համայնքային անշարժ և շարժական գույքի վարձավճարների և օգտագործման վճարների ժամանակին և սահմանված չափերով գանձման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

9) Կատարված աշխատանքների վերաբերյալ զեկույցների և հաշվետվությունների ներկայացման ժամկետներ:

191. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուները ծրագիր-ժամանակացույցով նախատեսված աշխատանքները կատարելիս, անհրաժեշտության դեպքում կարող են դիմել ոլորտային մասնագետների, փորձագետների՝ քաղաքաշինական, հողաշինարարական, տեխնիկա-տրանսպորտային բնույթի եզրակացություններ ստանալու նպատակով:

192. Աշխատանքային ծրագիր-ժամանակացույցին համապատասխան վերահսկողության իրականացման ընթացքում համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուն կիրառում է հետևյալ մեթոդները՝

1) Ուսումնասիրություն,

2) Հետազոտություն,

3) Զննություն, տեղազննություն,

4) Դիտարկում,

5) Փաստաթղթերի ուսումնասիրություն,

6) Համեմատական վերլուծություն և այլն:

193. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուն աշխատանքների կատարման ընթացքում՝

1) կարող է մուտք գործել համայնքային շենքեր, շինություններ, տարածքներ՝ առանց խոչընդոտելու դրանցում իրականացվող գործունեության բնականոն ընթացքին,

2) պահանջել բացել փակ տարածքները, պահեստները, կայանատեղերը,

3) պահանջել տրամադրել վերահսկողության համար անհրաժեշտ փաստաթղթեր, պայմանագրեր, նմուշներ՝ դրանց տիրապետողներից,

4) հետևել տրանսպորտային միջոցների, տեխնիկայի շահագործման պրոցեսին,

5) ակնառու խախտումներ բացահայտելու դեպքում, կանխել գույքի հետագա շահագործումը՝ մինչև օրենսդրությամբ սահմանված գործընթացնել սկսելը:

194. Համայնքային գույքը տիրապետողները չպետք է անհարկի խոչընդոտներ ստեղծեն համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուի աշխատանքներին:

195. Վերահսկողության գործընթացում պարզման ենթակա հարցերն են՝

1) համայնքային հիմնարկներին, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված և դրանց կողմից շահագործվող շենք-շինությունների, տարածքների, տրանսպորտային միջոցների և տեխնիկայի նպատակային նշանակությամբ օգտագործումը, պահպանվածության, սանիտարահիգիենիկ վիճակը, շահագործման անվտանգության կանոնների պահպանումը, վերանորոգման կամ հիմնանորոգման անհրաժեշտությունը, գործունեության կամ շախագործման համար անհրաժեշտ գույքի, սարքավորումների, տեխնիկայի, նյութերի ձեռքբերման անհրաժեշտությունը և այլն.

2) վարձակալության կամ օգտագործման տրամադրված համայնքային շենք-շինությունների տարածքների, տրանսպորտային միջոցների և տեխնիկայի պահպանվածության վիճակը, դրանց նպատակային օգտագործումը, վարձավճարների և օգտագործման վճարների ժամանակին և ամբողջությամբ գանձումը, շահագործման անվտանգության կանոնների պահպանումը և այլն.

3) համայնքի տարածքում գտնվող հուշարձանների, պատմամշակութային արժեների, կամուրջների, ցանկապատների, արհեստական ջրավազանների, ցայտաղբյուրների, խաղահրապարակների, խաղասարքերի, համայնքային կոլորիտային և դեկորատիվ զարդարանքների, գովազդային էլեմենտների, հենասյուների, նստարանների, լուսատուների, լուսացույցերի, խմելու և ոռոգման ջրագծերի, հիդրանտների, գազատարերի, ազդարարման համակարգերի, շչակների, և այլ համայնքային գույքի ամբողջականությունը և պահպանվածությունը.

4) հանայնքային գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքների նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործումը.

5) համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանվածությունը.

6) համայնքային հողամասերի նպատակային նշանակությամբ օգտագործելը, դրանք քաղաքաշինական, հողաշինարարական, անտառշինական կամ ջրաշինարարական նախագծերին համապատասխանող նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելը.

7) հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողերի վիճակը վատթարացնող այլ բացասական ազդեցություններից սահմանված կանոններով պահպանված լինելը.

8) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը չկուտակելու, չպահպանելու, ոչ արդյունավետ և ոչ նպատակային օգտագործելու, ապօրինի տեղափոխելու հանգամանքները:

196. Վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուի կողմից արձանագրվում են և անհապաղ զեկուցվում համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար:

197. Վերահսկողության արդյունքների մասին, աշխատանքային ծրագիր-ժամանակացույցին համապատասխան, ներկայացվում են հաշվետվություններ և զեկույցներ:

198. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության պատասխանատուն համայնքի անունից կնքված գործարքներ և այդ գործարքներով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն:

199. Համայնքային գույքի կառավարման վերահսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասով պատասխանատվությունը կիրառվում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

XIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

200. Համայնքային Գույքի կառավարման բաղկացուցիչ մաս է հանդիսանում համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային

կազմակերպություններին ամրացված, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց օգտագործման իրավունքով տրամադրված Գույքի արդյունավետ օգտագործման վիճակի մշտադիտարկումների (այսուհետ՝ մոնիթորինգ) և գնահատման ամբողջ գործընթացը, այդ թվում՝ Գույքի ընդհանուր բնութագրիչների և նրա օգտագործման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը, վերլուծությունը և գնահատումը, տեղ գտած բացթողումների, թերությունների, խախտումների բացահայտումը, գործող իրավակարգավորումներին համապատասխան Գույքի օգտագործումը և տվյալների բազայի վարումը:

201. Գույքի օգտագործման վիճակի գնահատման և վերլուծության իրականացման ընթացքում համեմատություններ կատարելու համար հիմք կարող են հանդիսանալ համայնքային հիմնարկների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից իրականացված Գույքի առանձին ուսումնասիրությունների արդյունքները, Գույքի գույքագրման և հաշվառման արդյունքում ստացված տեղեկությունները, Գույքի համայնքային հաշվառման բազայի, ինչպես նաև Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերում առկա տեղեկատվությունը:

202. Գույքի մոնիթորինգի և գնահատման հիմնական նպատակներն են՝

1) գնահատել Գույքի կառավարման արդյունքում ծախսերի և եկամուտների չափերը.

2) վեր հանել Գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից թույլ տրված շեղումների և դրանց պատճառած վնասների չափերը, ինչպես նաև խթանել դրանց շտկումն ու հաղթահարումը.

3) գնահատել Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի արդյունավետության մակարդակը.

4) գնահատել համայնքային Գույքի ռիսկայնության աստիճանը.

5) համայնքի բյուջեի մուտքերի ավելացումը.

6) համայնքի բյուջեի ծախսային մասի ծանրաբեռնվածության իջեցումը.

7) Գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը.

8) Գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ անհրաժեշտ մոնիթորինգի բազայի ստեղծումը.

9) Գույքի օգտագործման վիճակի գնահատումը.

10) Գույքի արդյունավետ կառավարման իրավիճակի բարելավման, կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

203. Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգը և գնահատումը համակարգում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարը իր որոշմամբ ստեղծում է Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի և գնահատման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որում ընդգրկվում են համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության, ֆինանսատնտեսագիտական, համայնքային գույքի կառավարման, համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ, գույքի կառավարման փորձագետներ: Համայնքապետարանի աշխատակազմում ներքին աուդիտի ստորաբաժանում չունենալու դեպքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ներքին աուդիտի գործառույթն իրականացնող հրավիրված անձինք:

204. Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգը և գնահատումը իրականացվում է համայնքի ավագանու կողմից հաստատված Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի իրականացման մոնիթորինգի (միջանկյալ, կիսամյակային) և Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի իրականացման գնահատման (տարեկան) միջոցով:

205. Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգը և գնահատումը իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի և գնահատման տարեկան ծրագրի հիման վրա, որը համայնքի ղեկավարի կողմից հաստատվում է մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 30-ը:

206. Տարեկան ծրագրում ամրագրվում է մոնիթորինգի ենթակա և համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց օգտագործման պայմանագրով տրամադրված գույքի անվանումը, հասցեն, յուրաքանչյուր հիմնարկում, կազմակերպությունում մոնիթորինգի անցկացման ժամկետը՝ ըստ եռամսյակների, և մոնիթորինգի իրականացման ընդհանուր տևողությունը:

207. Տարեկան ծրագրում ամրագրվում է նաև չօգտագործվող Գույքի մոնիթորինգը:

208. Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի համար տվյալների հավաքագրումն իրականացվում է մոնիթորինգի օգտագործման վիճակի տարեկան ծրագրի համաձայն՝ տվյալ տարվա հունվարի 20-ից:

209. Հանձնաժողովը Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի համար տվյալների հավաքագրումն իրականացնում է ըստ գույքի տեսակների (հողերի, շենքերի ու շինությունների, տրանսպորտային միջոցների և տեխնիկայի) առանձին-առանձին:

210. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ քայլերի միջոցով՝

1) Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

2) Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի արդյունքների համալիր վերլուծություն,

3) Գույքի կառավարման իրավիճակի զարգացման միտումների գնահատում,

4) Գույքի կառավարման իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում:

211. Հանձնաժողովը Գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ Գույքի օգտագործողներից պահանջում և ստանում է նախատեսված տեղեկանքները և մոնիթորինգն իրականացնում է տեղեկանքներին համապատասխան՝ համայնքային գույքի հաշվառման բազայում հաշվառված գույքի ընդհանուր բնութագրիչների և նրա օգտագործման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա:

212. Հանձնաժողովը նախատեսված տեղեկանքներին համապատասխան տեղեկատվությունը հավաքագրելուց հետո իրականացնում է մոնիթորինգ՝ մոնիթորինգի տարեկան ծրագրով սահմանված ժամկետում:

213. Մոնիթորինգ իրականացնող Հանձնաժողովի անդամները ուսումնասիրության ընթացքում, Գույքի օգտագործողի կողմից տրամադրված և Գույքի հաշվառման համակարգում ներկայացված տեղեկատվությունում տեղ գտած թերությունների, վրիպակների վերաբերյալ Գույքի օգտագործողից կարող են պահանջել փաստաթղթեր, ինչպես նաև պարզաբանումներ գործառույթների իրականացման իրավաչափությունը պարզելու համար:

214. Հանձնաժողովի անդամները ձևերով նախատեսված տեղեկատվությունը հավաքագրելուց և գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի

վերլուծությունը կատարելուց հետո Գույքի գտնվելու հասցեում իրականացնում են արդյունքների վերլուծություն, իրավական գնահատում, և կազմում են մոնիթորինգի վերաբերյալ համապատասխան արձանագրությունը:

215. Հանձնաժողովը չօգտագործվող Գույքի վերաբերյալ համայնքապետարանից ստացված տեղեկատվությունը հավաքագրելուց և գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը կատարելուց հետո Գույքի գտնվելու հասցեում իրականացնում է տվյալների ճշգրտում և վերլուծություն, կազմում է մոնիթորինգի վերաբերյալ համապատասխան արձանագրությունը:

216. Գույքի մոնիթորինգի ընթացքում տեղ գտած խախտումների, թերությունների և բացթողումների վերացման համար Գույքն օգտագործողին տրվում է ժամկետ՝ վերացման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները նախապես սահմանված ժամկետում Հանձնաժողովին ներկայացնելու պայմանով:

217. Գույքի մոնիթորինգի արդյունքում օգտագործողի կողմից վնաս պատճառած խախտումները, թերությունները և բացթողումները չընդունելու կամ դրանք ընդունելու և սահմանված ժամկետներում չվերացնելու դեպքում Հանձնաժողովը այդ մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

218. Գույքի մոնիթորինգի արդյունքում օգտագործողի կողմից թույլ տրված խախտումների, թերությունների և բացթողումների պատճառով վնաս հասցնելու դեպքում այդ մասին համայնքի ղեկավարը գրությամբ տեղեկացնում է Գույքը օգտագործողին և իրավասու մարմիններին:

219. Գույքը գործող օրենսդրությանը և կնքված պայմանագրերով սահմանված դրույթներին անհամապատասխան օգտագործելու դեպքում համայնքի ղեկավարը օրենսդրությամբ և կնքված պայմանագրերի համաձայն իրականացնում է համապատասխան միջոցներ:

220. Գույքի մոնիթորինգի ընթացքում գնահատման նպատակով բացահայտվում են՝

1) կնքված պայմանագրերին համապատասխան Գույքի օգտագործման վիճակը, այդ թվում՝ համապատասխանությունը, շեղումները և շեղումների արդյունքում հասցված հնարավոր վնասների չափերը.

2) ըստ տեղեկությունների հավաքագրման ձևերի հաշվարկվում են Գույքի քանակական կողմերը բնութագրող ցուցանիշների, մասնավորապես, օգտագործման տրամադրված, կանոնադրական գործառույթներին

համապատասխան ամրացված և տրամադրված ընդհանուր տարածքների մեջ չօգտագործվող մակերեսների տեսակարար կշիռների, ինչպես նաև վարձակալությունից և ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի դինամիկան՝ դրական և բացասական փոփոխությունները:

221. Գույքի օգտագործման վերլուծությունն իրականացվում է հետևյալ պահանջներին համապատասխան՝

1) Գույքի վերջին գույքագրման արդյունքների, սեփականության և օգտագործման իրավունքները հաստատող վկայականների, ինչպես նաև համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված, համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց անհատույց և վարձակալությամբ օգտագործման տրամադրված պայմանագրերի և վկայականների առկայության ուսումնասիրում.

2) Գույքի նպատակային (ըստ կանոնադրական գործառույթների համապատասխանության) օգտագործման բացահայտում և ըստ կազմակերպության զարգացման, ինչպես նաև գործարար ծրագրերի, տվյալ Գույքի նպատակային օգտագործման բարելավման վերաբերյալ առաջարկվող միջոցառումների գնահատում և կանոնադրական նպատակներին գույքի օգտագործման համապատասխանության քննարկում.

3) չօգտագործվող Գույքի (այդ թվում՝ տարածքների) առկայության դեպքում՝ պատճառների քննարկում և հետագա տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

4) ըստ նպատակային չօգտագործվող Գույքի առկայության բացահայտում և պատճառների քննարկում.

5) Գույքի վարձակալությունից և ծառայությունների մատուցումից մուտքագրված վճարների ընթացակարգերի պահանջների պահպանման օգտագործման ուղղությունների ուսումնասիրում:

222. Հանձնաժողովը ամփոփելով Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի և վերլուծության արդյունքները տարվա ընթացքում պատրաստում է երկու հաշվետվություններ՝ Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի (միջանկյալ, կիսամյակային) և Գույքի օգտագործման վիճակի գնահատման (տարեկան):

223. Հանձնաժողովը Գույքի օգտագործման վիճակի մոնիթորինգի (միջանկյալ) վերաբերյալ հաշվետվությունը կազմում է մինչև ընթացիկ տարվա առաջին կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը, Գույքի օգտագործման վիճակի գնահատման (տարեկան) վերաբերյալ հաշվետվությունը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը:

224. Հանձնաժողովը կազմած հաշվետվությունները ներկայացնում է համայնքի ղեկավարի քննարկմանը:

XIV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

225. Անշարժ (հողամասերը, շենքերը, շինությունները, տարածքները, արհեստական կառույցները և այլ անշարժ գույքը) և շարժական (տրանսպորտային միջոցները, տեխնիկան և այլ շարժական գույքը) Գույքի կառավարումն իրականացվում է Գույքի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի միջոցով և այդ ծրագրերը հանդիսանում են ՀՀՋԾ-ի բաղկացուցիչ մասը:

226. Մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

227. Գույքի կառավարման արդյունքների տարեկան հաշվետվությունը հանդիսանում է հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասը:

228. Համայնքի ղեկավարի պաշտոնավարման ընթացքում կազմվում և ավագանու հաստատմանն են ներկայացվում Գույքի կառավարման արդյունքների 4 տարեկան (միջանկյալ) և մեկ ավարտական հաշվետվություններ: Հինգերորդ տարվա տարեկան հաշվետվության փոխարեն կազմվում է առավել ամբողջական ավարտական (հնգամյա) հաշվետվություն:

229. Հաշվետվության նախագիծը մշակելու նպատակով համայնքի ղեկավարի կողմից ստեղծված Հանձնաժողովը կազմում և համայնքի ղեկավարի

հաստատմանն է ներկայացնում հաշվետվության նախագծի մշակման, քննարկման և հաստատման ժամանակացույցը:

230. Հաշվետվության նախագծի կազմումը, քննարկումները և հաստատումը իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

231. Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է հաշվետվության նախագծի աշխատանքային քննարկումներ՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության, ֆինանսատնտեսագիտական, համայնքային գույքի կառավարման ստորաբաժանումների (առկայության դեպքում) մասնագետների, համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների, բնակավայրերի վարչական ղեկավարների, Հանձնաժողովի անդամների և համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման կամ քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության հարցերի խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, համայնքում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին և խմբերին:

232. Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովները անցկացնում են նախնական քննարկումներ և, մինչև ավագանու նիստին նախորդող յոթերորդ օրը, հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց եզրակացությունները գրավոր ներկայացնում են համայնքի ղեկավարին:

233. Անցկացված քննարկումների արդյունքներով, ԽՄ-ն և համայնքի աշխատակազմը լրամշակում են Գույքի կառավարման արդյունքների տարեկան հաշվետվության նախագիծը, պատրաստում են դրա վերաբերյալ ավագանուն տրամադրվող տեղեկատվությունը (ամփոփաթերթերը և տեղեկանքները) և ներկայացնում համայնքի ղեկավարին:

234.Համայնքի ղեկավարը լրամշակված հաշվետվության նախագիծը և դրան կից փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

235. Համայնքի ղեկավարը հաշվետվությունը համայնքի ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Այն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական

մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայության դեպքում՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը:

236. Հաշվետվությունը հիմնվում է Գույքի գույքագրման, Գույքի կառավարման ոլորտում իրականացված մոնիթորինգի և վերլուծությունների արդյունքների վրա, պետք է ճշգրտորեն համապատասխանի Գույքի կառավարման տվյալ տարվա ծրագրի կառուցվածքին և պարունակի տեղեկություններ՝ Գույքի կառավարման տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքների, բացահայտված սխալների ու շեղումների, դրանց պատասխանատուների մասին:

237. Հաշվետվությունը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը՝

1) Ներածություն.

2) Գույքի կառավարման իրականացման տարեկան արդյունքների վերլուծություն՝ տարվա սկզբից կատարված ծախսերի, ձեռք բերված ուղղակի արդյունքների (ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխության դինամիկայի) և այլնի վերաբերյալ.

3)Գույքի կառավարման տարեկան ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների 20-- թվականի տարեկան արդյունքների, բացահայտված սխալների ու շեղումների, դրանց պատասխանատուների մասին. Եզրակացություններ և առաջարկություններ (կամայական ձևաչափով՝ կախված Գույքի կառավարման իրականացման տարեկան արդյունքների վերլուծությունից). Հավելվածներ՝ ըստ անհրաժեշտության:

238. Կազմված հաշվետվությունում տեղեկատվությունը պետք է հնարավորինս լինի պարզ ու մատչելի, ներկայացնի Գույքի կառավարման տարեկան ծրագրերով նախատեսված ծրագրերի կատարման ընթացքը և համեմատելով այդ ծրագրերով պլանավորված միջոցառումներն ու դրանց իրականացմամբ փաստացի ձեռք բերված ուղղակի արդյունքները:

239. Համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվության ավագանու որոշման նախագծի վերաբերյալ քվեարկության անցկացումը և որոշման ընդունումը իրականացվում են համայնքի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

240. Համայնքի ավագանու կողմից հաշվետվության քննարկման արդյունքներով, ավագանին կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ի գիտություն է ընդունում հաշվետվությունը,

2) հանձնարարում է համայնքի ղեկավարին՝ ՀՀԶԾ-ում կատարելու փոփոխություններ և (կամ) լրացումներ՝ ներկայացնելով այն համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

241. Գույքի կառավարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից:

242. Համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից ՀՀԶԾ-ում փոփոխություններ կամ լրացումներ նախաձեռնելու առաջարկությունն ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ներկայացվում է համայնքի ղեկավարին:

243. Համայնքի ղեկավարն, իր կամ համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների առաջարկությամբ, «ՀՀԶԾ-ում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը՝ կից համապատասխան փաստաթղթերով, համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

244. Համայնքի ավագանու անդամները, մինչև ավագանու նիստից մեկ օր առաջ, ՀՀԶԾ-ում փոփոխությունների կամ լրացումների նախագծի վերաբերյալ կարող են համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում:

245. Համայնքի ավագանու հանձնաժողովներն անցկացնում են նախնական քննարկումներ և, ավագանու նիստից առնվազն մեկ օր առաջ, ՀՀԶԾ-ում փոփոխությունների կամ լրացումների նախագծի վերաբերյալ իրենց եզրակացությունները գրավոր ներկայացնում են համայնքի ղեկավարին: ԽՄ-ի և ոլորտային աշխատանքային խմբի անդամները կարող են հրավիրվել հանձնաժողովի նիստին:

246. Ավագանու նիստում ՀՀԶԾ-ում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին նախագծի վերաբերյալ, որպես հիմնական զեկուցող, հանդես է

գալիս առաջարկություն ներկայացնողը, որպես հարակից զեկուցող հանդես է գալիս համայնքի ղեկավարը:

247. Հաշվետվությունը բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար համայնքապետարանի աշխատակազմի կողմից կարող են պատրաստվել և հրատարակվել հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

XV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

248. ՏԻՄ-երի գործունեության բոլոր բնագավառներում կարևորագույն սկզբունքներից է թափանցիկությունը:

249. Համայնքային գույքի կառավարման ոլորտում համայնքապետարանի աշխատակազմը ապահովում է բոլոր գործողությունների, քայլերի և ընթացակարգերի թափանցիկությունը՝ դրա համար կիրառելով համայնքապետարանի աշխատակազմում, համայնքում, ինչպես նաև՝ այլ հարթակներում առկա և հասանելի բոլոր միջոցները, հնարավորությունները և գործիքները:

250. Համայնքային գույքի կառավարման ոլորտում թափանցիկության և հրապարակայնության ապահովման իրավական հիմքեր են հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 11-րդ հոդվածի 5-րդ մասի 18-րդ կետը, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված սույն ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

251. Համայնքային գույքի կառավարման ոլորտում ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը երաշխավորում են այդ գործունեության՝

1) օրինականությունը,

2) պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը,

3) մատչելիությունն ու վստահությունը,

4) օպերատիվությունն ու արագ արձագանքումը,

5) արդյունավետությունը:

252. Համայնքային գույքի կառավարման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման համար համայնքապետարանի աշխատակազմը կիրառում է հետևյալ գործիքները՝

1) համայնքի պաշտոնական համացանցային կայքը,

2) աշխատակազմի վարչական շենքի, ինչպես նաև բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում փակցված ցուցատախտակները,

3) մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքը,

4) հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքը,

5) մամուլը,

6) հեռուստատեսությունը,

7) զանգվածային լրատվության այլ միջոցները,

8) համայնքի վարչական տարածքում (բնակավայրերում)՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի վայրերում տեղադրված ցուցատախտակները:

253. Համայնքային գույքի կառավարման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովվում են հետևյալ մեթոդներով՝

1) համայնքային սեփականության գույքի գույքագրման անցկացումը գույքագրման կենտրոնական և աշխատանքային հանձնաժողովների կողմից, որոնցում ընդգրկվում են լայն շրջանակի աշխատակիցներ և մասնագետներ,

2) գույքագրման փաստաթղթերի հաստատումը համայնքի ավագանու որոշմամբ, որը հրապարակվում է համայնքապետարանի պաշտոնական կայքում և 7-օրյա ժամկետում ուղարկվում մարզպետարան,

3) գույքագկրման արդյունքների հիման վրա կազմված համայնքի սեփականության գույքի ցանկի հրապարակումը համայնքապետարանի պաշտոնական կայքում,

4) համայնքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) «Համայնքային գույք» բաժնի վարումը գույքի կառավարման գործառույթներով օժտված աշխատակցի միջոցով,

5) համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի կազմումը (որոնք հանդիսանում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը), դրանց հաստատումը համայնքի ավագանու որոշմամբ, որը հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքում.

6) համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերի կազմումը (որոնք հանդիսանում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը), դրանց հաստատումը համայնքի ավագանու որոշմամբ, որը հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքում.

7) համայնքի գույքի կառավարման հետ կապված ծախսերի և եկամուտների ընդգրկմամբ համայնքի բյուջեի, ինչպես նաև՝ բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունների կազմման, քննարկման և հաստատման գործընթացների իրականացումը հանրային մասնակցության ապահովմամբ,

8) համայնքի գույքի կառավարման մասի ընդգրկմամբ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, ինչպես նաև՝ տարեկան աշխատանքային պլանի, կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության հրապարակումը,

9) համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (հողամաս, շենք-շինություն, տարածք, տրանսպորտային միջոց, տեխնիկա և այլն) վարձակալության կամ օգտագործման տրամադրելու համար վարձավճարների և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային լսումները և քննարկումները,

10) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը, ինչպես նաև՝ այլ անշարժ գույքը, օտարելու կամ վարձակալության տրամադրելու նպատակով հրապարակային սակարկությունների մասին հայտարարությունների հրապարակումը համայնքի պաշտոնական կայքում, մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում,

11) հրապարակային սակարկությունների միջոցով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացի իրականացումը աճուրդային և մրցույթային հանձնաժողովների միջոցով, որոնց կազմում ընդգրկվում են նաև համայնքի գույքի կառավարման գործառույթներ իրականացնող աշխատակիցներ:

254. Համայնքային գույքի կառավարման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովում են բնակիչների մասնակցությունը համայնքի գույքի կառավարման գործընթացներին:

255. Համայնքային գույքի կառավարման գործընթացին բնակիչների մասնակցության հիմնական գործիքակազմերն են՝

1) հանրային իրազեկում, տեղեկատվություն, զեկույցներ, հաշվետվություններ, ընդունելություններ,

2) հանրային լսումներ,

3) հարցումներ՝ հեռախոսազանգերով, բնակիչների բնակարաններ այցելություններով, փոստով (ներառյալ՝ էլեկտրոնային), բջջային հեռախոսների կարճ հաղորդագրություններով, համացանցային կայքում կամ սոցիալական հարթակներում՝ առցանց /online/ ռեժիմով,

4) հանդիպումներ համայնքապետարանում ֆոկուս խմբերի հետ,

5) մասնակցություն համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների աշխատանքներին,

6) համայնքի ավագանու մշտական կամ ժամանակավոր, ֆորմալ կամ ոչ ֆորմալ հանձնաժողովներում բնակչության ներկայացուցիչների ընդգրկում,

7) համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու բնակիչների նախաձեռնություն:

XVI.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

256. Գույքի կառավարման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ համայնքների ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացման կարևոր բաղադրիչ է հանդիսանում Գույքի կառավարման բնագավառում գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում իրենց գործառույթների վերաբերյալ իրավակարգավորումները:

257. Համայնքային ծառայության պաշտոնների (այդ թվում՝ Գույքի կառավարման բնագավառում գործառույթներ իրականացնող համայնքային ծառայության պաշտոնների) անձնագրերի կազմման իրավական հիմքերն են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածները և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 04-Ն հրամանը:

258. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 04-Ն հրամանով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատում է համայնքի ղեկավարը:

259. Գույքի կառավարման բնագավառում գործառույթներ իրականացնող արհեստավարժ և մասնագետ կադրեր ներգրավելու նպատակով համայնքի ղեկավարը կարող է «Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» նախկինում ընդունված և գործող որոշման (որոշումների) մեջ Գույքի կառավարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել փոփոխություններ, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով ըստ որի՝ «Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստումից հետո» և հաշվի առնելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 04-Ն հրամանի պահանջները:

260. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները պահպանելով հանդերձ, կրթություն վերաբերյալ կարող է սահմանվել, որ այդ պաշտոնները զբաղեցնողները պետք է ունենան տնտեսագիտություն կամ ֆինանսներ կամ հաշվապահական հաշվառում և աուդիտ կամ կառավարում կամ շուկայագիտություն (մարքեթինգ) կամ հողաշինարարություն, հողային կադաստր մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

261. Իրավական ակտերի և օտար լեզուների իմացությանառումով կարող է սահմանվել, որ այդ պաշտոնները զբաղեցնողները պետք է ունենան ՀՀ Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական

ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2001 թ. ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների գույքագրման և վերագնահատման մասին» N 264-Ն որոշումների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» N 102 հրամանի, ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի «Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 787-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 2-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում նոր հիմնական միջոցների և սկզբնական արժեքով հաշվառվող կենսաբանական ակտիվների մաշվածության հաշվարկման նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները սահմանելու մասին» N 3-Ն հրամանների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

262. Սույն բաժնի վերոնշյալ իրավական ակտերի ցանկը ամբողջական չէ, պարտադիր չէ նաև այն ամբողջությամբ սահմանել Գույքի կառավարման բնագավառումգործառույթներ իրականացնող միայն մեկ համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրում: Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում իրավական ակտերի ցանկը սահմանելիս պետք է հաշվի առնել համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը,համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը և Գույքի կառավարման գործառույթներ

իրականացնող համայնքային ծառայողների հիմնական ֆունկցիոնալ պարտականությունների բաշխումը՝ ըստհամայնքային ծառայության պաշտոնների խմբի և ենթախմբի:

263. Գույքի կառավարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողի պաշտոնի անձնագիրը հաստատում է համայնքի ղեկավարը:

264. Գույքի կառավարման գործառույթները աշխատակազմի հայեցողական կամ վարչական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց միջոցով իրականացնելու դեպքում, անհրաժեշտ է, որ այդ գործառույթները նրանց վերապահված լինեն նաև համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ:

265. Համայնքի ղեկավարը համայնքի Գույքի կառավարման գործառույթները կամ այդ գործառույթների մի մասը կարող է իրականացնել նաև պայմանագրային հիմունքներով՝ քաղաքացիական աշխատանք իրականացնող անձանց միջոցով՝ նրանց հետ կնքելով որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի իրավակարգավորումներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 232-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2023 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման 2023 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի կառավարման 2023 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք. Աբովյան

Հավելված N 1
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 28-ի
N 232-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2023 թվականի ծրագիրը նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի 2022 - 2026թ.թ. հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է ՀՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:
2. Ծրագրի իրականացման հիմքում դրվել են 2023 թվականի ընթացքում հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:
3. Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքները, հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված Հողերի կառավարման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերը:
4. Հողերը տնօրինում է համայնքի ավագանին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
5. Հողերի կառավարման հարաբերությունների կարգավորումը ներառում է՝
   1) հողերի կառավարման հիմնախնդիրների լուծումը.
   2) հողերի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և անշարժ գույքի հաշվառման բազայում Հողերի ամբողջական ընդգրկումը, ինչպես

նաև հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրությունների անցկացումը.

3) հողերի մշտադիտարկումը (մոնիթորինգ), օգտագործումը և պահպանումը. Հողերի շրջանառության նպատակի իրականացումը.

4) հողերի կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ուղղությունների սահմանումը.

5) հողերի օտարման և օգտագործման ոլորտում համայնքային քաղաքականության մշակումը և իրականացումը.

6) հողերի գույքային իրավունքների կառավարման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:

6. Ծրագրի նպատակներն են՝

1) հողերի կառավարման արդյունավետության շարունակական բարձրացումը.

2) հողերի կառավարման միասնական համակարգի ձևավորումը, հանրային օգտակարության բարձրացումը.

3) հողերի օտարումից, ինչպես նաև վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրելուց ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը.

4) համայնքային գույքային շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը.

5) հողերի ամբողջական հաշվառումը, հաշվառման տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) համայնքային հողային հարաբերությունների կարգավորումը և շարունակական բարեփոխումը.

7) հանրությանը հողերի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.

8)հողերի արդյունավետ օգտագործման ճանապարհով համայնքային տնտեսությունում ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ապահովումը:

7. Սույն Ծրագրի իրականացման հիմքում դրված են հողերի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) հողերի կառավարման յուրաքանչյուր հողակտորի ծրագրային կառավարման նպատակի սահմանում և ամրագրում.

2) հողերի կառավարման արդյունավետության շարունակական ապահովում.

3) հողերի կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

4) համայնք-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում.

5) հողերի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

8. Հողերի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) հողերի բերրիության, ֆիզիկական, որակական և նորմատիվային այլ հատկանիշների պահպանումը.

3) համայնքի կարիքների բավարարման համար անհրաժեշտ հողերի գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն հողամասը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է համայնքի կարիքները բավարարող հողամասերի խմբին.

4) համայնքի կարիքները բավարարող հողամասերը հիմնականում ենթակա չեն օտարման.

5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող հողամասերի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը:

9. Հողերի գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, աճուրդների և մրցույթների հայտարարման, կազմակերպման և իրականացման ընթացակարգերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման կարգի ընթացակարգերին համապատասխան:

10. Հողերի օտարման (սեփականության իրավունքով անհատույց տրամադրումը, աճուրդով վաճառքը, ուղղակի վաճառքը և փոխանակությունը) և օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքի, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի) տրամադրումը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան:

11. Ծրագրի ցանկերում ներառված հողերի օտարումը, օգտագործման և կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, անտառաշինարարական նախագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով, դրանց բացակայության դեպքում՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով նախատեսված նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 23-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 828 որոշմամբ սահմանված կարգով:

12. Հաստատված գլխավոր հատակագիծ չունենալու դեպքում՝ համայնքում հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով հողերի օգտագործման ժամանակավոր սխեման կազմվում է հողամասերի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ

13. Ստորև Աղյուսակ 1-ում ներկայացված է համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների:

Աղյուսակ 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

		Տարածքը (հեկտար)
	Համայնքի տարածքը	17382.84
	այդ թվում՝	
1.	Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության	17382.84
1)	գյուղատնտեսական նշանակության հողեր	13143.98
	որից՝	
ա.	վարելահողեր	3312.58
բ.	բազմամյա տնկարկներ	80.93
գ.	խոտհարքներ	965.24
դ.	արոտավայրեր	6183.97
ե.	այլ հողատեսքեր	2601.27
2)	բնակավայրերի հողեր	2903.69
	որից՝	
ա.	տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	123.33
3)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	675.76
4)	էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	165.91
5)	հատուկ պահպանվող տարածքների հողեր	246.89
6)	հատուկ նշանակության հողեր	166.84
7)	անտառային հողեր	4.20
8)	ջրային հողեր	75.56
9)	պահուստային հողեր	-
2.	Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների	17382.84
1)	Քաղաքացիների	5939.03
2)	Իրավաբանական անձանց	381.46
3)	Համայնքային	6229.42

4)	Պետական	4809.17
5)	Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների	23.76

III. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԸՍՏ՝ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ

14. Ստորև Աղյուսակ 2-ում ներկայացված է 01.07.2022 թվականի դրությամբ համայնքի հողային հաշվեկշռով համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ՝ հողատեսքերի, նպատակային և գործառնական նշանակության, օգտագործման տրամադրվածության (վարձակալության, կառուցապատման, սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքների):

	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Ընդամենը համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ հողային հաշվեկշռի (հա)	որից՝	
				01.07.2022թ. դրությամբ տրամադրված է վարձակալության (հա)	01.07.2022թ. դրությամբ տրամադրված է կառուցապատման, սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքների (հա)
1	2	3	4	5	6
1.1	Գյուղատնտեսական	վարելահող	444.43	76.94	
1.2		բազմամյա տնկարկներ	8.75		
1.3		խոտհարք	8.75		
1.4		արոտ	3205.28	166.39	
1.5		այլ հողատեսքեր	1296.26	52.69	
2.1	Բնակավայրերի	բնակելի	220.09	1.03	1.94
2.2		հասարակական	42.28	3.34	2.51
2.3		խառը կառուցապատման	4.25		
2.4		ընդհանուր օգտագործման	308.96	0.04	0.18
2.5		այլ հողեր	234.34	10.32	2.24
3.1	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական	47.96	17.99	0,21
3.2		գյուղատնտեսական	164.94	9.62	
3.3		պահեստարանների	12.7	5.18	
3.4		ընդերք օգտագործման	62.62	62.21	
4.1	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	էներգետիկայի	30.90		
4.2		կապի	4.34		
4.3		տրանսպորտի	7.11	0.06	0.28
4.4		կոմունալ	40.47	6.71	
5.1	Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական			
5.2		առողջարարական			
5.3		հանգստի	3.44		
5.4		պատմական և մշակութային	81.86	0.06	
6	Հատուկ նշանակության				
7.1	Անտառային	անտառ			
7.2		թփուտ			
7.3		վարելահող			
7.4		խոտհարք			
7.5		արոտ			
7.6		այլ հողեր			
8.1	Ջրային	գետեր			
8.2		ջրամբարներ	2.79		
8.3		լճեր	9.89	0.20	
8.4		ջրանցքներ	11.30		

8.5		հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ օբյեկտների	5.72	0.06	
9.1	Պահուստային	աղուտներ			
9.2		ավազուտներ			
9.3		ճահիճներ			
9.4		այլ			
ԸՆԴԱՄԵՆԸ			6229.42	412.83	7.36

IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա.

2) համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված հողերի վրա.

3) քաղաքացիներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին օգտագործման, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրված և հավատարմագրային կառավարման հանձնված հողերի վրա.

16. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա, այդ հողամասերի հողային հարաբերությունների կարգավորումները համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրականացնում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

17. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) հողերի օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր հողամասի ծրագրային կառավարման իրականացումը.

2) հողերի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող հողերը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը.

4) հողերի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը.

5) հողերի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և հողերի օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.

6) հողերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների գործունեության արդյունքներից ելնելով նրանց պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.

7) ներդրումային ծրագրեր իրականացնող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող և նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և կազմակերպություններին հողերի օտարման և օգտագործման տրամադրման նպաստավոր պայմանների ապահովումը:

V. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

18. Հողերը օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

1) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.

2) ուղղակի վաճառքի միջոցով.

3) աճուրդով.

4) փոխանակության միջոցով:

19. Հողամասերը կարող են օտարվել (այդ թվում՝ անհատույց) միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

20. Համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը հանդիսանալով ընդհանուր օգտագործման արոտավայրեր և ներառված լինելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների մեջ, օտարման ենթակա չեն, դրանք միայն կարող են տրվել օգտագործման իրավունքով:

21. Հողամասի օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝

1) հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օտարման եղանակի, ժամկետների, նպատակի, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գնի, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին.

2) հողամասն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը, օտարվող հողամասի վաճառքի գինը և վճարման ժամկետները:

22. Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից, իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից, իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 30 տոկոսից:

23. Հողամասն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում ավագանու նոր որոշումը ներառում է տեղեկություններ՝ հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) հողամասը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին, որը պետք է լինի վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 10 տոկոսի չափով:

24. Հողամասերը օտարվում են համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման հնգամյա ծրագրին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված

դեպքերում: Հողերի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

25. Հողերի օտարման պայմանագրերում պետք է ամրագրվեն համայնքի կողմից հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ծրագրերի ժամկետները:

VI. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

26. Հողամասերն օգտագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

1) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.

2) վարձակալության:

27. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:

28. Հողերը կարող են օգտագործվել՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց) հանձնվել միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

29. Հողամասի օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքը) տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի չափի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին:

30. Հողամասերը մրցույթներով վարձակալության տրամադրելու համար վարձավճարի մեկնարկային տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

31. Հողամասի վարձակալության մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

32. Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները համայնքի ղեկավարի կողմից կարող են պարզեցված կարգով վարձակալության հանձնվել և առանց նոտարական վավերացման համապատասխան պայմանագրերը կնքվել մինչև 3 տարի ժամկետով՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

VII. ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

33. Հողերի կառավարման համակարգի կատարելագործման և հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) օտարել՝
սույն հավելվածի N 1 ցանկով առաջարկվող այն հողամասերը, որոնց օտարումը առավել կնպաստեն համայնքի տնտեսական աճի ապահովմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը.
2) օգտագործման տրամադրել՝
- անհատույց օգտագործման իրավունքով իրենց գործառույթները և լիազորությունները լիարժեք, արդյունավետ իրականացնելու և համայնքի զարգացմանը նպաստելու նպատակներով՝ սույն հավելվածի N 2 ցանկում նշված հողամասերը՝ ցանկում նշված ոչ առևտրային կազմակերպություններին,
- հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով՝

գյուղատնտեսական մթերքների արտադրության աճի խթանման, համայնքում նոր ծառայությունների մատուցման, բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների, առանձին թաղամասերի և քաղաքաշինական համալիրների կառուցման,համայնքի բնակչության կարիքների առավել բավարարումն ապահովելու նպատակներով՝ համաձայն սույն հավելվածի N 3 ցանկի:
3) Համայնքի հողերի սեփականության իրավունքների, հողերի տնօրինման, տիրապետման և օգտագործման պաշտպանվածության ապահովման նպատակով՝ իրականացնել սույն հավելվածի N 4 ցանկում նշված հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումները և ձեռք բերել սեփականության վկայականներ:
4) 2023 թվականի ընթացքում ապահովել ընդհանուր բնույթի հետևյալ միջոցառումների կատարումը՝
- վերանայել մինչև սույն ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի տրամադրման ժամկետները, վարձավճարների չափերը և դրանք համապատասխանեցնել գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
- համապատասխան իրավական ակտերի միջոցով հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին,
- իրականացնել մինչև սույն ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման մոնիթորինգ, հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառների և գործոնների վերլուծություն,
- վերահսկողություն իրականացնել հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և վերահսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասով կիրառել պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով,
- սահմանել հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից,
- հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման նպատակով ապահովել նրանց մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին:

VIII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

34. Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը ապահովում է համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի հողաշինարարության և (կամ) քաղաքաշինության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների միջոցով:

35. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման, միջոցառումների իրականացման և Ծրագրի կատարման մասին համայնքապետարանի աշխատակազմի հողաշինարարության և քաղաքաշինության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանման կողմից մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը մշակվում է տարեկան հաշվետվություն, որը ներկայացվում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը քննարկում է համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի և համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման և (կամ) քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության հարցերի խորհրդակցական մարմինների հետ: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը և հաշվետվության վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով ավագանու կողմից փոփոխություններ են կատարվում նաև ՀՀՀԾ-ի բաղկացուցիչ մասը հանդիսացող հողերի կառավարման ծրագրում:

IX. ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

36. Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ ավագանու մշտական հանձնաժողովների կողմից: Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կամ անդամների կողմից առաջարկված այն փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ, որոնք ավելացնում են ծրագրի իրականացման ծախսերը, համայնքի ղեկավարը կազմում և ավագանուն է ներկայացնում իր եզրակացությունը:

Համայնքի ղեկավարը ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները օրենքով սահմանված կարգով ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

X. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

37. Ծրագրով նախատեսված միջոցառումների և համայնքային նշանակության հողաշինարարությունը (հողամասերի չափագրումը, համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումը և վկայականների ձեռքբերումը, աճուրդների և մրցույթների կազմակերպումը, գյուղատնտեսական հողերի պահպանման ծրագրերի մշակումը, հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի,

հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը, համայնքային հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը, խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը, հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը, համայնքում սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը, հողաշինության գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական և մշակութային ու այլ հետազոտական աշխատանքների իրականացումը, համայնքի հողային ֆոնդի հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը, հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու թեմատիկ քարտեզների և ատլասների կազմումը, հողերի մոնիթորինգը, նոր հողամասերի կազմավորման, հողամասերի միավորման ու բաժանման, գոյություն ունեցող հողամասերի կարգավորման միջոցառումների իրականացումը) իրականացվում է համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

38. Ծրագրով նախատեսված հողերի օտարումից, ինչպես նաև՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրումից, աճուրդների և մրցույթների կազմակերպումից ստացված միջոցները մուտքագրվում են համայնքի բյուջե:

39. Ծրագրի իրականացման կանխատեսվող ծախսերը և Ծրագրի իրականացումից սպասվելիք մուտքերը ներկայացված են սույն հավելվածի N 5 ցանկում:

ՑԱՆԿ N 1

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսի չափը (քառ. մ.)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	Հողամասի օտարման նորմատիվային գինը մեկնարկային գինը (հազ. դրամ)
1	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 71 հող.	525,00	07-002-039-800	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
2	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 73 հող.	525,00	07-002-039-799	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
3	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 75 հող.	525,00	07-002-039-798	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
4	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 76 հող.	525,00	07-002-039-836	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
5	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 92 հող.	525,00	07-002-039-828	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
6	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 94 հող.	525,00	07-002-039-827	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
7	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 96 հող.	525,00	07-002-039-826	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
8	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 1-ին թաղ., թիվ 98 հող.	525,00	07-002-039-825	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 332,00
9	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 1 հող.	582,81	07-002-039-735	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 589,00
10	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 2 հող.	564,00	07-002-039-734	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 506,00

11	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 5 հող.	510,00	07-002-039-768	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
12	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 6 հող.	510,00	07-002-039-769	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
13	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 7 հող.	510,00	07-002-039-738	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
14	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 8 հող.	510,00	07-002-039-739	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
15	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 9 հող.	510,00	07-002-039-783	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
16	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 10 հող.	510,00	07-002-039-782	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
17	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 11 հող.	510,00	07-002-039-751	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
18	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 12 հող.	510,00	07-002-039-752	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
19	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 13 հող.	543,64	07-002-039-753	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 415,00
20	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 14 հող.	544,21	07-002-039-754	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 418,00
21	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 15 հող.	510,00	07-002-039-737	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
22	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 16 հող.	510,00	07-002-039-736	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
23	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 17 հող.	510,00	07-002-039-770	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
24	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 18 հող.	510,00	07-002-039-771	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
25	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 19 հող.	553,66	07-002-039-772	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 460,00
26	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 21 հող.	550,52	07-002-039-745	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 446,00
27	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 22 հող.	510,00	07-002-039-743	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
28	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 23 հող.	510,00	07-002-039-744	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00

29	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 24 հող.	510.00	07-002-039-741	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
30	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 25 հող.	510.00	07-002-039-740	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
31	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 26 հող.	510.00	07-002-039-742	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
32	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 27 հող.	510.00	07-002-039-746	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
33	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 28 հող.	510.00	07-002-039-747	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
34	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 29 հող.	510.00	07-002-039-748	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
35	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 30 հող.	510.00	07-002-039-757	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
36	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 31 հող.	510.00	07-002-039-756	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
37	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 32 հող.	510.00	07-002-039-755	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
38	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 33 հող.	510.00	07-002-039-760	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
39	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 34 հող.	510.00	07-002-039-774	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
40	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 35 հող.	545.71	07-002-039-761	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 424,00
41	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 39 հող.	510.00	07-002-039-763	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
42	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 40 հող.	510.00	07-002-039-764	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
43	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 42 հող.	510.00	07-002-039-749	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
44	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 43 հող.	510.00	07-002-039-750	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
45	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 44 հող.	510.00	07-002-039-758	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
46	ք. Աբովյան, 5-րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 45 հող.	510.00	07-002-039-759	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00

47	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 46 հող.	510,00	07-002-039-781	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
48	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 47 հող.	510,00	07-002-039-780	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
49	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 48 հող.	510,00	07-002-039-779	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
50	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 49 հող.	510,00	07-002-039-778	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 266,00
51	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2 րդ թաղ., թիվ 50 հող.	527,20	07-002-039-777	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 342,00
52	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 51 հող.	548,17	07-002-039-773	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 435,00
53	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., թիվ 1/1/20 հող.	1150.7	07-002-0039-1439	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5112.0
54	ք. Աբովյան, 5 րդ մ/շ., թիվ 1/1/21 հող.	752.1	07-002-0039-1440	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3341.0
55	ք. Աբովյան, Հատիսի փող., 123	14.9	07-002-0039-1661	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	500.0
56	ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 4/312/3	52.9	07-002-0039-1662	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	557.0
57	ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 2/445	20.0	07-002-0049-0747	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	324.0
58	ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 9/59	19.8	07-002-036-055	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	136.0
59	ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 9/20	19.8	07-002-036-087	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	136.0
60	ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 9/520/1/1	48.9	07-002-0116-0410	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	335.0
61	ք. Աբովյան, Օգոստոսի 23 փողոց, թիվ 1/12/4	325.0	07-002-0068-0024	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5258.0
62	գ. Վերին Պտղնի Երևան Սևան մայրուղի 1-2 կմ 10 հողամաս	3000.0	07-062-0105-0056	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	48530.0
63	գ. Արամուս	20000.0	07-013-0148-0009	գյուղատնտեսական	այլ հողատեսք, վարելահող	5769.0
64	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 1-ին միկրոշրջան 60/2	15,80	07-002-0088-0441	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	512,00

65	Համայնք Արովյան, ք. Արովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, թիվ 3/8	523,00	07-002-0103-0214	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ.	արդյունաբերական օբյեկտների	4 648,00
66	Համայնք Արովյան, ք. Արովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, թիվ 3/7	9976,90	07-002-0103-0213	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ.	արդյունաբերական օբյեկտների	88 632,00
67	Համայնք Արովյան, ք. Արովյան, 4-րդ միկրոշրջան 3/1	530,00	07-002-0039-1671	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	11 146,00
68	Համայնք Արովյան, ք. Արովյան, 7-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 122/16	389,40	07-002-0029-0036	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5 324,00
69	Համայնք Արովյան, ք. Արովյան, Հատիսի փողոց, 85/2	261,60	07-002-0039-1644	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5 502,00
70	Համայնք Արովյան, գ. Արամուս, Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք, 4/2	6117,20	07-013-0155-0008	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ.	արդյունաբերական օբյեկտների	35 328,00
71	Համայնք Արովյան, գ. Արամուս, Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք, 4/3	2270,50	07-013-0155-0009	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշ.	արդյունաբերական օբյեկտների	13 114,00
72	Համայնք Արովյան, ք. Արովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 1 հող.	582,81	07-002-039-735	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5 178,00
73	Համայնք Արովյան, ք. Արովյան, 5-րդ մ/շ., 2-րդ թաղ., թիվ 2 հող.	564,00	07-002-039-734	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5012,0
74	Համայնք Արովյան, ք. Արովյան, 8-րդ մ/շ., 5-րդ թաղ., թիվ 108 հող.	400,00	07-002-025-098	բնակավայրերի	տնամերձ	5468,0
75	Համայնք Արովյան, ք. Արովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 33/1	1126,50	07-002-0049-0749	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	18223,00
76	Համայնք Արովյան, ք. Արովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 33/3	483,90	07-002-0049-0748	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	7828,00

77	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, թիվ 18/3	290,37	07-002-0049-0519	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**4698,00**
78	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 1/39/3	403,50	07-002-0049-0634	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**6528,00**
79	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, թիվ 18/5	146,80	07-002-0049-0518	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2375,00**
80	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 122/16	389,40	07-002-0029-0036	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2662,00**
81	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 3-րդ թաղամաս, 68/1	1053,44	07-002-0003-0047	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**7200,00**
82	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, թիվ 1/2/5	900,74	07-002-0039-1230	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**4001,00**
83	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, թիվ 1/2/6	584,99	07-002-0039-1195	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2599,00**
84	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, թիվ 1/2/7	611,10	07-002-0039-1189	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2715,00**
85	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Բարեկամության փողոց, 5/1	82,40	07-002-0070-0457	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**1333,00**
86	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Բարեկամության փողոց, 7/3	46,80	07-002-0070-0459	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**758,00**
87	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 20/1	163,70	07-002-0049-0756	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2649,00**
88	Համայնք Աբովյան, գ. Բայահովիտ, 1-ին փողոց, 4/36	34,10	07-018-0104-0121	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	**552,00**
89	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա, 4/12	28,60	07-002-0070-0458	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	463,00
90	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սևանի փողոց, 9/4	30,00	07-002-0049-0755	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	486,00
91	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ռոսիայի փողոց, 10/2	22,50	07-002-0050-0331	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	364,00
92	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 18/13	10,00	07-002-0039-1674	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	106,00
93	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, 6	983,97	07-002-0039-1206	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10346,00
94	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Կոտայքի փողոց, 1/56	36,00	07-002-0107-0068	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	247,00

95	Համայնք Արովյան, ք. Արովյան, Հատիսի փողոց, 1/106	436,00	07-002-0036-0466	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2980,00
96	Համայնք Արովյան, ք. Արովյան, Սարալամջի փողոց, 8/11	59,50	07-002-0089-0354	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	407,00
97	Համայնք Արովյան, գ. Արամուս	4859,20	07-013-0161-0113	գյուղատնտեսական	արոտավայր	2000.0
98	Համայնք Արովյան, գ. Արամուս	10504,30	07-013-0149-0005	գյուղատնտեսական	վարելահող, այլ հողատեսք	5000.0
99	Համայնք Արովյան, գ. Արամուս	27377,80	07-013-0148-0007	գյուղատնտեսական	վարելահող, այլ հողատեսք	8000,00
100	Համայնք Արովյան, գ. Կաթնաղբյուր	4629,00	07-034-112-060	գյուղատնտեսական	արոտ	2500,00
101	Համայնք Արովյան, գ. Առինջ, հս. Արովյան թաղամաս, 31-րդ փողոց, 4	1000,00	07-011-0379-0002	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10514,00
102	Համայնք Արովյան, ք. Արովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 29/12	14,00	07-002-0049-0751	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	227,00
103	Համայնք Արովյան, ք. Արովյան, Գառնու փողոց, 8/11	31,40	07-002-0082-0442	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	331,00
104	Համայնք Արովյան, ք. Արովյան, 8-րդ միկրոշրջան, 5-րդ թաղամաս, 60/1	91,50	07-002-0025-0223	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	626,00
105	Համայնք Արովյան, ք. Արովյան, 8-րդ միկրոշրջան, 4-րդ թաղամաս, 31/1	345,1	07-002-0023-0035	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2359,00
106	Համայնք Արովյան, ք. Արովյան, Բարեկամության փողոց, 7/9	160,30	07-002-0070-0460	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2594,00
107	Համայնք Արովյան, ք. Արովյան, Սևանի փողոց, 2/12	51,30	07-002-0049-0757	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	830,00
108	Համայնք Արովյան, ք. Արովյան, Զորավար Անդրանիկի փողոց, 3/1	520,90	07-002-0117-0094	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2314,00
109	Համայնք Արովյան, ք. Արովյան, Զորավար Անդրանիկի փողոց, 110	98,90	07-002-0039-0679	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	440,00
110	Համայնք Արովյան, ք. Արովյան, Զորավար Անդրանիկի փողոց, 7/1	539,30	07-002-0117-0095	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2396,00
111	Համայնք Արովյան, ք. Արովյան, Երիտասարդական փողոց, 1/13	14,20	07-002-0089-0355	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	150,00
112	Համայնք Արովյան, Գետարգել, 7-րդ փողոց, 6	700.0	07-058-0029-0007	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	4785,00
113	Համայնք Արովյան, ք. Արովյան	30231,00	07-002-0133-0166	գյուղատնտեսական	արոտավայր	13000,00

114	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 5-րդ թաղամաս, թիվ 156/1	44,00	07-002-0025-0224	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**301,00**
115	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց, 2-րդ թաղամաս, 69	510,00	07-002-036-218	բնակավայրերի	տնամերձ	**3486,00**
116	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, թիվ 2/469/1	18,00	07-002-049-229	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**292,00**
117	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Պ. Սևակի թաղամասի 1-ին փողոց, 51/6	158,60	07-011-0062-0020	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**1668,00**
118	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Հ. Աբովյան թաղամասի 2-րդ փողոց, 53/1	54,80	07-011-0378-0044	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**577,00**
119	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Զորավար Անդրանիկի փողոց, 98	499,50	07-002-0039-1681	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2219,00**
120	Համայնք Աբովյան, գ. Կամարիս	7899,20	07-035-0161-0062	գյուղատնտեսական	արոտավայր	**2000,00**
121	Համայնք Աբովյան, գ. Պտղնի	3830,00	07-054-0332-0035	գյուղատնտեսական	այլ հողատեսք	**4000,00**
122	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա, 4/30	18,10	07-002-0070-0464	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	586,00
123	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան 5-րդ թաղամաս, թիվ 126/1	199,00	07-002-0025-0225	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2721,00
124	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երիտասարդական փողոց, թիվ 1/12	21,50	07-002-0089-0356	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	453,00
125	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, թիվ 26/3	10,40	07-002-0039-1685	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	165,00
126	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց, թիվ 4/5	159,40	07-002-0121-0024	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5158,00
127	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց 196/1	60,00	07-002-0040-0341	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1262,00
128	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երիտասարդական փողոց 18/3	60,70	07-002-0084-0089	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1277,00
129	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Կարմիր բանակի փողոց 5/6	273,20	07-002-0148-0078	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2427,00
130	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 20/2	100,00	07-002-0049-0761	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2427,00
131	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 8/12	70,30	07-002-0049-0764	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	2275,00
132	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, թիվ 47/6	14,60	07-002-0039-1686	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	308,00

133	Համայնք Արովյան, ք. Արովյան, Հանրապետության պողոտա, 40/3	8,60	07-002-0070-0466	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	279,00
134	Համայնք Արովյան, ք. Արովյան, 3-րդ միկրոշրջան, թիվ 3/337/2	17,90	07-002-058-077	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	290,00
135	Համայնք Արովյան, գ. Պտղնի	594,10	07-054-0343-0009	գյուղատնտեսական	այլ հողատեսք	**1000,00**
136	Համայնք Արովյան, գ. Գետարգել 6-րդ փողոց, 4	700,00	07-058-0027-0008	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	4785,00
137	Համայնք Արովյան, ք. Արովյան, 8-րդ միկրոշրջան 37	400,00	07-002-0022-0038	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5468,00
138	Համայնք Արովյան, ք. Արովյան, 4-րդ միկրոշրջան 18/14	20,00	07-002-0039-1693	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	421,00
139	Համայնք Արովյան, գ. Արամուս, Տիգրանաձորի խճուղի թիվ 41/1	234,80	07-013-0032-0053	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	2034,00
140	Համայնք Արովյան, ք. Արովյան, Երևանյան փողոց 1/3	52,80	07-002-0135-0157	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1709,00
141	Համայնք Արովյան, գ. Գեղաշեն, 2-րդ թաղամասի 4-րդ փողոց 15/1	268,90	07-023-0291-0050	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**658,00**
142	Համայնք Արովյան, ք. Արովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 17/1	27,60	07-002-0049-0760	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**894,00**
143	Համայնք Արովյան, գ. Պտղնի Պտղնի 2 այգետարածքի 4-րդ թաղամաս, 10/1	255,90	07-054-0133-0013	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2274,00**
144	Համայնք Արովյան, ք. Արովյան, 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամաս 49/1	420,80	07-002-0007-0084	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**5752,00**
145	Համայնք Արովյան, ք. Արովյան, Ինտերնացիոնալ փողոց թիվ 1/1	34,80	07-002-0075-0051	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**1126,00**
146	Համայնք Արովյան, ք. Արովյան, Բարեկամության փողոց 7/3	46,80	07-002-0070-0459	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**1516,00**
147	Համայնք Արովյան, գ. Առինջ, Պ. Դուրյան թաղամասի 4-րդ փողոց 61/1	1790,90	07-011-0406-0012	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**56490,00**
148	Համայնք Արովյան, ք. Արովյան, Բարեկամության փողոց 7/9	160,30	07-002-0070-0460	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**2594,00**

149	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա, 28/4	48,70	07-002-0086-0461	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1576,00
